




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

- Share** — copy and redistribute the material in any medium or format
- Adapt** — remix, transform, and build upon the material

ԴՆՍԿԻ

ԲԱԳՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

ՆՈՐ ԷՏԱՊՈՒՄ



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧЕДЕНИЯ
Ленинградского
СССР

ԱԴՐԿՈՍԿՈՒՄԻ (Բ) ԲԱԳՎԻ
XX ԿՈՒՍԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ
ԱՐՎԱԾ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ —
1932 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 12-ԻՆ

ԵՐՆԵՇՐ
ՈՒ 1932



3kml/489244 (24)
Պ-77

3KPI(47.924)

25 AUG 2005 32-11
A 354

Պրոֆեսորներ ընտր յերկրների, միացեք!

7-77

Վ. Ի. ՊՈԼՈՆՍԿԻ

14 NOV 2000

== Բ Ա Գ Վ Ի ==
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

ՆՈՐ ԵՏԱՊՈՒՄ

ИНСТИТУТ
ДОСТОУПДЕН
Ленинград
СССР

Ադրկումկուսի (բ) Բազմի
XX կուսկոնֆերանսում
արված գեկուցումը—
1932 թ. հունվարի 12-ից

Ա. ԶԵՐՆԵՐ

Բազում—1932

23 SEP 2013

5847

Отпечатано в гостипографии
„Красный Восток“
Азполиграф ВСНХ
Баку, Карантинная, 84.
Главлит № 769. Заказ 1063.
Стат.-фор. А-5.
Тираж 3000 экз.



59244.66

Ամենից առաջ, ընկերներ, թույլ սվիտ Ադրբեյջանի Կոմ-
մունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի
հանձնարարությամբ հաղորդել ձեզ բոլոր վիկյան ջերմա-
գույն վոդչույն. (բուռն ծափահարություններ):

I. ՀԱՄԱԶԻՄԱՐՋԱՅԻՆ ԿՐԻՋԻՍԸ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային Միության ու Անդրկովկասի պրոլետարական
խոշոր կազմակերպություններից մեկի Բազմի կազմակերպու-
թյան աշխատանքն անմիջապես կապված է միջազգային քաղա-
քականության ու մեր Խորհրդային Միության զրուծված ընդհա-
նուր հարցերի հետ Ուստի, ամենից առաջ չես անհրաժեշտ եմ
համարում կանգ առնել միջազգային դրության հարցերի վրա:

Նա բնորոշ է համաշխարհային կապիտալիստական կրիզիսի
հետագա խորացումով ու սրումով, տնտեսական կրիզիսի գերա-
ճումով—քաղաքական կրիզիսի, հեղափոխական կրիզիսի:

ԿԱՊԻՏԱԼԻՋՄԻ ՆԵՐՔԻՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐՈՒՄԸ

Համաշխարհային տնտեսության հիմնական հակասությունը
դա կապիտալիզմի սխտեմի և սոցիալիզմ կառուցող խորհրդ-
ային իշխանության հակասությունն է: Յերկու սխտեմների այդ
հիմնական հակասությունն աշխարհը բաժանում է յերկու անա-
վասար մասերի, վորոնցից մեկը—մեր Խորհրդային Միությունն
աճում է, զարգանում ու ամրապնդվում, իսկ յերկրորդը՝ ծվատվում
է ներքին հակասություններից, զեպի անկում է գնում, զեպի
նոր հակադասական ցնցումներ է գնում:

Կապիտալիստական յերկրների միջև հիմնական հակասու-
թյունը—դա համաշխարհային իմպերիալիզմի ամենազլխավոր զի-
շատիչներն են—Հյուսիսային Ամերիկայի Միացյալ
Նահանգներն ու Անգլիայի միջև յերկու հախտու-
թյունն ու պաքարն է: Այդ յերկու յերկրներն էլ բռնված են
սուր կրիզիսով:

Սակայն, Անգլիան Միացյալ Նահանգներից տարբերվում է
նրանով, վոր տարեց-տարի կորցնում է իր ուժը և իր ազդեցու-

թյունը, այժմ—կրիզիսի շրջանում դրանց ավելի ուժեղ կերպով է կորցնում, համառորեն դիմադրելով Միացյալ Նահանգների համաշխարհային հեղեմունիա նվաճելու ձգտումին: Նրանց պայքարի տապարեզն են հանդիսանում այս կամ այն չափով աշխարհիս համարյա բոլոր յերկրները, վորտեղ նրանք ունեն ահադին գաղութներ ու կիսագաղութներ:

Ավելի ու ավելի սրվում են նաև մյուս ավելի կարևոր հաստեթյուններն ու պայքարը կապիտալիստական պետութլուններին միջև, մանավանդ Ամերիկայի ու Յպոնիայի միջև՝ Հեռավոր Արևելքում (Չինաստան) ու Խաղաղ ովկիանոսում առաջնութլուն ձեռք բերելու համար:

Ավելի ու ավելի են սրվում հակասութլունները Ֆրանսիայի ու Գերմանիայի միջև. այդ հակասութլունները կապված են նրա հետ, վոր իմպերիալիստական պատերազմում հաղթանակած յերկրները, մանավանդ Ֆրանսիան, ձգտում են ծծել հաղթված Գերմանիայի բոլոր կենսական հյութերը:

Բացի դրանից, ավելի ու ավելի սրվում են պայքարն ու հակասութլուններն իմպերիալիստական պետութլունների ու նըրանց գաղութների ու կիսագաղութների միջև:

Կապիտալիստական յերկրներից ամեն մեկում աշեղ կերպով դարգանում է դասակարգային պայքարի սրումը՝ պրոլետատի ու ճնշված մասսաների ու բուրժուազիայի միջև: Ահա, մոտավորապես, այն վոչ լրիվ յերկրացիներն, վ յից յինելով, մենք պետք է քննենք կապիտալիստական յերկրները ձվատող ներքին պայքարը, դրանից հանենք մեր յեղրակացութլունները:

Կապիտալիստական տնտեսութլան ներկա կրիզիսը—գաղարատադրութլան կրիզիս է: Մթերքների ու ապրանքների հըսկայական պաշարների հետ միասին՝ սովի դատապարտված աշխատավոր մասսաների ու պրոլետարիատի հսկայական աղքատացում գոյութլուն ունի:

Թն ներկա ժամանակաշրջանում ինպիսի խորութլան է հասել կրիզիսը՝ բնորոշում են թեկուզ հետևյալ թվերը, վոր տալիս են արդյունաբերութլան հիմնական հյուղերի արտադրական ապարատի բեռնավորման պատկերը՝ 1931 թվի սեպտեմբերին:

Չուգուեն.—Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների գործարաններն իրենց արտադրական կարողութլան համեմատում—47%-ով: Գերմանիայում—32%-ով, Ֆրանսիայում—

Պոզալատ.—Ել ավելի աղեցուցիչ պատկեր: Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում արտադրական կարողութլան

28%-ն է բեռնավորված, Գերմանիայում—40%-ը, Անգլիայում—22%-ը:

Նավթ.—Միացյալ Նահանգներում նավթարդյունաբերութլան արտադրական կարողութլունն ոգտադործվում է միայն 45%-ով:

Բամբակի գործվածքներին արդյունաբերութլունն — Անգլիայում բեռնավորված է միայն մոտ 30%-ով:

Որինակ, Ամերիկայի Ուլախոմա շտատում նավթահանութլունը դադարեցվել է ստիպողական կերպով—գորքի միջոցով:

Նույն տեղը—Ամերիկայում վերջին 6 ամսում հանդգրված է 149 հալոց, գործում է միայն 70 հալոց:

Միացյալ Նահանգների բամբակ արտադրող 11 շտատների կոնֆերանսը վորոշել է, այս տարի բոլոր վարելահողերում բամբակի ցանքսը պակսեցնել 30%-ով: Դա 1931 թվի համեմատութլամբ ցանքսը կրկնակի կկրճատի:

Հսկայական չափեր է ընդունում զանազան պաշարների ու մթերքների վոչնչացումը. որինակ՝ Բրազիլիայում վոչնչված է մոտ մեկ միլիոն քսակ սուրճ, աշնցում են բրիկետներ շինելու սուրճից, յեգիպտացորենից, ցորենից յեվ ալյուն՝ կաթասաները վտուելու համար:

Յես շատ չիմ բերի կապիտալիստական տնտեսութլան կրիզիսը բնորոշող որինակներ:

Դրանք հայտնի են, մենք ամեն որ դրանց մասին կարդում ենք թերթերում:

Հարկավոր է միայն, թեկուզ մի բոպե, պատկերացնել այն ծանր պայմանները, վորոնց մեջ են գտնվում այժմ այդ յերկրներին բանվոր դասակարգն ու աշխատավորները: Մենք տեսնում ենք հսկայական աղքատութլուն, քաղցածութլուն, 12 միլիոն գործազուրկ միայն Միացյալ Նահանգներում, ամեն տեղ արտադրութլան հկայական անկում, կապիտալիստական տնտեսութլան նեխման ու քայքայման բազմաթիվ յերևութլներ:

Ահա, որինակ, ինչ է գրում Անգլիայի մասին բուրժուական գրող ու ժուրնալիստ Անդրե Զիգֆրիդը: Նա գրել է մի վոչ վատ գիրք—«20-րդ դարի Բրիտանիայի կրիզիսը», վոր մեղ մոտ լույս է տեսել 1931 թվին:

Այդ գրքում նա գրութլունը բնորոշում է այսպես.—«Բրիտանական է կոնոմիկան այժմ ել յերբ արդեն վերջացել է 20-րդ դարի առաջին յերբորդականը, հենվում է այն պիսի տիպի կա-

առւելաժքի ու պրակտիկայի վրա, ինչպիսիք
չեղել են ամենաքիչը 50 տարի սրանից առաջ:
Յերբեմն թվում է, թե այդ մնացած աշ-
խարհի հետ անմիջական հարակցությունն
կտրված կղղում ժամանակը կանգնեցնե-
րա՞յն առաջագրեւելու ամբողջական ան-
ցալ մթնոլորտում»:

Տալով Անգլիայի արդյունաբերության
ընդլայնվող շուկաները՝ Ջիգերի դե-
պարտում է.— «Պետք է տեղի ունենա-
ր Անգլիայի իրոք
անկումը, վորպեսզի նա հրաժարվե-
ր իր դրամի միջազգային նշանակու-
թյունից և վերադարձվեր անսասան
առանցքից—
վարկից»:

Մենք գիտենք, վոր անգլիական
ֆունտն ընկել է, ինչպես
և ընկել է մի շարք այլ չեղճների
վալյուտան: Դա վոչ միայն
սովորական կրիզիսի ամենացայտուն
արտահայտությունն է, մա-
նավանդ Անգլիայի համար, դա
հիմնական ցուցանիշն է այն պրո-
ցեսի, վորն այլապես չի կարելի
անվանել, քան Անգլիայի—այդ
իմպերիալիստական հսկայական
պետության քայքայում:

Բնորոշ է, վոր մի շարք բուրժուական
գրականագետներ, քաղաքագետներ
ու մասնագետներ բացօթյա
առում են, թե բոլոր
կապիտալիստական չեղճներն
արդեն տնտեսական պատերազմ
են տանում իրենց հարևանների
դեմ, պատերազմ—ուժասպառ
անելու համար:

Անգլիան հանդիսանում է այդ
մաքսային, տնտեսական
պատերազմի կենտրոններից
մեկը: Անգլիայում կոնսերվատորնե-
րի տարած հաղթանակը տեղի
ե ունեցել մաքսային սահմանա-
փակումների նշանի տակ:
Բայց ընկերներ, թեկուզ
անգլիական պնդագլուխ
կոնսերվատորները ժա-
մանակավորապես վերցրել
են իշխանությունը, մենք
գիտենք, վոր նրանք իրենց
յեր-
կիրը փրկել են կարող
վորովհետև վերի-
դիսով վարակված համաշխարհային
կապիտալիստական տնտեսու-
թյան ամբողջ սիս-
տեմը:

Ֆրանսիան, վորն իմպերիալիստական
պատերազմից հետո
մյուսներից ավելի է սնվել
ու սնվում է Գերմանիայի
կենսական հյութերով,
վորը շարունակ ներսրսկել
է այդ հյութերն իր որդա-
նիվի մեջ, այժմ նույնպես
կրիզիսի դաժնագույն շրջան
է ապ-

րում: Ծանր արդյունաբերու-
թյան միացությունները
«Կոմի-
տե-դե Ֆորժ» գրում է իր
եջերում.— «Յեթե մեր
հարևան-
ներից վոմանք կրիզիսի
ավելի հսկայական աստիճանն
են ապ-
րում, ապա մենք (այսինքն
Ֆրանսիան, Վ. Պ.) գտնվում
ենք միայն նրա զարգացման
սկզբնական աստիճանում,
անդուհա-
նալ ջնքում արգելակել
նրի ոգնությամբ»:

Կրիզիսն ընդգրկել է
Ֆրանսիայի ամբողջ ծանր
արդյունա-
բերությունը: Հանգցրված
հոցներն ի թվը գե-
րազանցում է գործողնե-
րի թվից. հանգցրված
է 109, գործում է—106-ը:

Ֆրանսիական պարլամենտում
պատգամավորներից մեկը—
Բոնոֆանը՝ բացօթյա
հանդես գալով մաքսային
պատերազմի ոգտին՝
հայտարարում է.— «Յես
այլ չեղճ է մտա-
նում, բացի առանց
բացառության բոլոր
առևմտրական պաշտանա-
գրերի քանդելուց,
վորովհետև նրանք
վտանգի են չեն
թա-
ր-
կում մեր արտադրանքը»:

Հայտնի էր իոն գրում է.—
«Յեվրոպայի ու ամբողջ
աշխարհի փրկությունը
միայն և միայն Ազգերի
Լիգայի (այսինքն
Ֆրանսիայի, Վ. Պ.)
ուժեղացման մեջ է»:

Այսպես մեջ է բերում
«Տրիստան և Իզոլդա»
լեգենդան, վորտեղ
թագավորը սիրվածների
դադաղի վրա տնկել
է վաղի թուփ Ֆրանսիայից
և խաղողի վորթեր
Հոնոսից: Վո-
րոշ ժամանակից հետո
արմատները հյուսվել են:
Կարելի է, վոր
մենք ել շուտով
կհանենք այդ որին»:

Երբ իոն կրիզիսից
դուրս գալու չեղճ տեսում
է այն բանում, վորպեսզի
«սիրված» Գերմանիան
դրվի դադաղում և
սնունդ ստացվի այն
հյութերից, վոր դեռևս
կարելի է գիշատո-
ղաբար հանել գերմանական
տնտեսությունից՝ Գերմանիայի
աշ-
խատավոր մասսաների
ու բանվորների քաղցածու-
թյան հիման վրա:

Ֆրանսիան իրենից
կախված բոլոր մի-
ջոցները ձեռք է առնում,
վորպեսզի Գերմանիային
դարձ-
նի կիսազաղութ, ամբողջովին
կախյալ մի յերկիր: Դա
ընկեր-
ներ, կապված է հարկե,
Գերմանիայի բանվոր
դասակարգի չե-
ռակի ճնշման ու շահագործման
հետ: Դա մանր-բուրժուական
խավերի լայն աղքատացումն
է բերում և պրոլետարիատի
դասա-
կարգային պայքարի
հետագա սրումն և առաջացում:

Յեվ այսպես, այն ինչ
վոր անում է բուր-
ժուական իրեն փրկելու
համար, դա դուրս

ե կոչուած այն ուժերը, վորոնք բուրժու-
ազիւային դեպի կորուստ կտանեն:

Գերմանիան գտնուում է լիակատար սնանկութեան նախոր-
ջակին: Ռեյսըմանկի վոսկու ապահովութեանը 1931 թվի դեկտ-
31-ին կազմում եր միայն 17,3%: Բայնիս օրենքով պետք է լի-
սեր 40%:

Գերմանիայի պրեմիեր Բրյուներն դը պաշտոնապես
հայտնել է Ֆրանսիային, վոր Գերմանիան անկարող է կարճ
ժամկետային փոխառութեանների և ռեպարացիաների (Յունգի
պլան) վճարումները կատարել: Գերմանիայում զործազուրկների
ընդհանուր թիվը հասնում է 7 միլիոն հոգու: Գերմանիայում
փակվում են գիտական և կուլտուր-կրթական հիմնարկները:
Փակված են 8 դուղատնտեսական, քիմիական, անտառագործա-
կան և այլ ինստիտուտներ, 6 մանկավարժական ակադեմիաներ,
արվեստի 3 ակադեմիա և այլն: Մնացածներում խիստ կրճատ-
վում է ուսուցչական կազմը, գիտական-հետազոտական լաբորա-
տորիաների և նման նպատակների ծախսերը միմյանումի են հաս-
ցըրվում:

Գիտական տեխնիկական ընկերութեանների գերմանական միա-
ցութեանը մի նամակով դիմել է բոլոր հիմնարկներին ու ձեռ-
նարկներին՝ ոգնելու յերիտասարդ ինժեներներին: Նամակում
ասված է, վոր բարձրագույն դպրոցներն ավար-
տող յերիտասարդ ինժեներներին միայն 20
տոկոսն աշխատում է իբրեւ մոնտյոր, շոֆեր,
ռեստորանի լալեյ, ամաններ լվացող, իսկ
50 տոկոսը միանգամայն գործազուրկ է:

Բնորոշ են գերմանական բուրժուական թերթերի լեւույթ-
ները նոր տարվա առթիվ:

«Ճրանկֆոլերտեր Յայտուեն դը» գրում է Գեր-
մանիայի նվաճումների մասին 1931 թվին: Նրանք կարողում են
Խորհրդային Միութեան նվաճումների մասին և իրենց նվաճում-
ներն են թվում:

Ահա թե Գերմանիայում ինչ է համարվում 1931 թվի նվա-
ճում.— «Միթե սա հսկայական նվաճում է, վոր չնայած ծովային
աղետին, նավը դեռևս մնում է ջրի վրա: Հսկառակ բոլոր փոթո-
րիկներին, հակառակ փոթորիկների, հակառակ բուրժուական
վում ենք վերջին պաշարներից, մենք ապրում ենք նրանց հաշիւին»:

Յես կարծում եմ, ընկերներ, այստեղ լրացուցիչ փաստերի
պետք չկա համաձայնվելու համար գերմանական կոմպուտի կենտ-
րոն անդամ ընկ. Ռեմմելի լեյ լեւույթի հետ, վորը մոտերքս

գերմանական մամուլում հայտարարել է, թե Գերմանիայի
համար 1932 թիվը՝ դա գերմանական բուր-
ժուազիւային համար ճակատագրական յեվ
գերմանական պրոլետարիատի վճռական
պայքարի ու հարձակման տարի է:

Ելի մի օրինակ, վորը մեզ համար կարևոր է, վորովհետեւ
մենք պետք է ուշադրութեամբ հետևենք Լեհաստանի դրութեանը:
Լեհաստանն Արևմուտքից Խորհրդային Միութեան դեմ հար-
ձակում գործելու համար համաշխարհային կապիտալի նախա-
պատրաստման գինադաշտ է հանդիսանում:

Ահա թե ինչ է գրում իշխան Ռաձիվիլի օրգան «Դե Են
Պոլսկի» թերթը. «1931 թիվը — դա կատաստրոֆ-
աների ու պարտութեաններին տարի է, ըստ
յերիվույթի նամենածանրը՝ հաշտութեան
կնքելուց հետո»:

Լոձի «Ռեսպուբլիկա» թերթի հոդվածը, վոր ամ-
բողջովին արատապել է «Պոլսկա-Ջերոյնա» թերթը,
գրում է.

«Այս օր Յեվրոպայում կատաղի կերպով
գործում է ժանտախտ — տնտեսական կրիզի-
սի ահողոք, սարսափելի հիվանդութեանը:
Այդ հիվանդութեանը զգացվում է տեսքով
իբր թե առողջ ազգի զարկերակից, իբր շուր
ջըն աղքատութեան շունչն է փչում, քայ-
քայում է արտագրական ապարատը, կաթ-
վածահար է առում այն բոլորն, ինչ վոր
մերուն դներն են ստեղծել... Կրիզիսը հեզ-
ունում է մաքսատնային սահմանները, ամենա-
կատաղի պրոլետարիոնի դմը, բոլոր բացա-
ռիկ օրերն քները, մեր ամբողջ անճոռնի յեվ
անողնական պաշտպանութեանը: Դրութեանն
ավելի ու ավելի է վատանում: Հիվանդու-
թեանը քանդում է աշխարհի արմատից
սկսած մինչև վ կատարը: Բանկերի ձեռք ա-
ռած բոլոր միջոցները, բոլոր քաղաքական
բանակցութեանները, Բրյուներն գներ իբր
բոլոր դեկրետները, բորսաների փակումը, ար-
տահանական պրեմիաները, մի խոսքով այն
բոլորն ինչ վոր մենք առում ենք, նման է
լուցկիներին շինած ամբարդակի, վորը պետք

ե մ ո լ ե գ ն ո ղ գ ե ա ի ա ո ա ջ ն ա ո ն ի ՚ Մ ե ն ք թ ը դ-
թ ի տ ա ն ի ք ե ն ք շ ի ն ու մ կ ա ռ կ ու տ ի ժ ա մ ա ն ա կ,
մ ե ն ք փ չ ու մ ե ն ք ա մ բ ո ղ ջ ք ա ղ ա ք ը հ ա մ ա կ ա ծ
հ ր դ ե հ ը, մ ե ն ք փ ո Ր ձ ու մ ե ն ք ձ ե ու ք ո վ հ ե տ
շ ա ղ տ ե լ շ ե շ տ ա կ ի գ ն դ ա կ ը»:

Յեւ վերջում «Ռեպուբլիկան» գրում է.

«Ճ ի շ տ չ ե, թ ե կ ո մ ու ն ի զ մ ը կ ա ն գ ն ա ծ ե
Յ ե վ Ր ո ա յ յ ի շ ե մ ք ի ն: Կ ո մ ու ն ի զ մ ն ա ք գ ե ն
ի ր մ ի վ ո ա ը դ ր ե լ ե Յ ե վ Ր ո ա յ յ ու մ»:

Միանգամայն բացառիկ դրություն է այժմ այնպիսի յեր-
կրներում, ինչպիսին Հնդկաստանն է, մանավանդ Չինաստանը:

Ընդհանրապես Չինաստանի դրությունն այժմ այլապես
բնորոշել չի կարելի, չեթե վոչ վորպես մի տնտեսություն, վոր
համակված է ընդհանուր ժողովրդա-տնտեսական կառաստորֆա-
լով: Դա կապված է նաև Չինաստանի վերջին հեղեղման հետ,
վորը վոչ թե տարեհալին, այլ սոցիալական թշվառություն էր,
վորովհետև կախված էր ջրային սարքավորումներից ու պատենշ-
ներից:

Պաշտոնական տվյալներով՝ այդ հեղեղման ժամանակ Չի-
նաստանի միմիայն Յանցզի գետի հովտում խեղտվել է 350.000
հոգի և սովի մատնվել 50 միլիոն, ավերվել է 4 միլիոն տուն: Գաղ-
թողների թիվը միմիայն Յանհանգում հասնում է 25 միլիոն հո-
գու: Սոված մարդկանց այդ հեղեղը դիմել է դեպի քաղաքները.
փողոցներում, իսկ մի շարք նահանգներում դժուրացիական տըն-
տեսությունները հիմնովին քայքայվել են:

Չինաստանի կենտրոնական ուսյոններում հաճախակի են
դառնում մարդակերությունների դեպքերը ու արագությունը աճում է
ստրկավաճառությունը:

Այն ինչ, միլիտարիստները շարունակում են ծծել աշխատա-
վոր մասսաների վերջին միջոցները: Մտքովում են նոր, անհա-
մար հարկեր: Այսպես՝ Սուբեյ և Սենան նահանգնե-
րում մտցրված են հետևյալ նոր հարկերը՝ գլխահարկ, վառարան-
ների ծխնելույզների հարկ, դռների հարկ, գերեզմանաքարերի
հարկ, ցուցանակների հարկ, հատուկ հարկ «կոմունիստներին
վոչնչացնելու համար» և այլն:

Այս բոլորը բնորոշում է տնտեսական սարսափելի կատաս-
տրոֆան և հող ե ստեղծում՝ Չինաստանում հեղափոխական ու
հակաիմպերիալիստական շարժման հսկայական թափի համար:

Մի քանի փաստեր Յապոնիայի մասին,—այն յերկրի
մասին, վոր մեծ քանակությամբ ֆյոդալական մնացորդներ, ուս-
տի ու չափազանց նեղ ներքին շուկա ունի:

Յապոնիայի ֆաբրիկաների կեսը կանգնած է հունիս ամսվա-
նից: Գործազուրկների թիվն այնտեղ 2 ու կես միլիոնից անց-
նում է: 1931 թվին դյուղացու միջին յեկամուտն ընկել է 5
անգամ:

Անա թե ինչու, ընկերներ, Յապոնիայի իմպերիալիստական
կառավարությունն այժմ այնպիսի ակտիվություն է զարգաց-
նում, աշխատեով դուրս գալ կրիզիսից՝ Մանջուրիան ու
Մոնղոլիան զավթելու, իմպերիալիստական պատերազմների մի-
ջոցով:

Այդ կողմից բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում
նախկին վարչապետ Տանակայի կողմից Յապոնիայի կայսրին
ներկայացրված մեմորանդումը, վոր կազմված է յեղել 1927
թվին, բաց իրականացնվում է այժմ:

Տանական գրում է. «Ինքն ապաշտպանում
թյան ու ուրիշներին պաշտպանելու հա-
մար Յապոնիան չի կարողանա վերացնել
Արեվելյան Ասիայի դժվարությունները,
չեթե «աբյան յեվ յերկաթի» քաղաքականու-
թյունն չվարի. սակայն այդ քաղաքականու-
թյունը վարելով մենք Միացյալ Նահանգ-
ներին դեմ առ դեմ կկանգնենք... Մենք
պետք կուեննանք խորտակել Միացյալ Նա-
հանգները, այսինքն այնպես վարվել նրանց
հետ, ինչպես վարվեցին ք ու ու-յապոնական
պատերազմի ժամանակ: Բայց Չինաստանը
նվաճելու համար մենք նախ պետք է նվա-
ճենք Մանջուրիան ու Մոնղոլիան: Աշխար-
հը նվաճելու համար՝ մենք նախ պետք է
նվաճենք Չինաստանը: Յեթե մենք կարո-
ղանանք նվաճել Չինաստանը, ասիական
մնացած բոլոր յերկրներն ու Հարավային
ծովի յերկրները կվախենան մեզնից յեվ
անձնատուր կլինեն մեզ: Այն ժամանակ աշ-
խարհը կհասկանա, վոր Արեվելյան Ասիան
մերն է»:

Հետո նա գրում է. «Յեթե մենք մի հայացք
գցենք Յապոնիայի ապագային, ապա մենք

պետք ե ընդունենք Ռուսաստանի հետ պատերազմելու անխուսափելիությունը Հյուսիսային Մանջուրացի դաշտերում»։

Յեղիլի շարունակում է. «Մանջուրիան ու Մոնղոլիան Հեռավոր Արեւելքի բեկերն են հանդիսանում։ Մեծ պատերազմի ժամանակ բեկերն ձակատամարտի դաշտեր են երի հետ մեր ունենալիք պատերազմներում մենք պետք ե ստիպենք Մանջուրացին ու Մանղոլիային կրկնու պատերազմի բոլոր սարսափները։ Մյուս պետություններին հրավիրելով մասնակցելու Հարավ-մանջուրական յերկաթուղու զարգացմանը՝ մենք կկարողանանք ամբողջ աշխարհին խաբել»։

Այս բոլորը դեռ մոտերքս կայսրի գաղտնի պլանն էր, այժմ հրատարակված է մեր ժուրնալներում, իսկ հիմա արդեն Յապոնիայում ել բացարձակ կերպով դրում են այն մասին, թե «ցանկանք կանգնած ենք խաղաղ ովկիանոսի ավազանում լինելիք չերկրորդ համաշխարհային պատերազմի նախորդակին։ Խաղաղ կան չեղընների մարտը կլինի սպիտակ ցեղի դեմ՝ աշխարհի վրա հեզամոնիա ձեռք բերելու մղվող պայքարում։ Այդ կողմից մանուկներս լիք բաղխման ներածությունն է»։

«Ամերիկական նավատորմի ղեկն տրոնացվում է խաղաղ Ովկիանոսում մանկվորներին պատրվակի տակ։ Յապոնիան պետք ե պատրաստ լինի»։

Ահա, ընկերներ, առանձին չերկրներ զրույթյան համառոտ պատկերացումը։

Կուսակցության 16-րդ համագումարում ընկ. Ստալինը նախատեսել է զեպերի այն զարգացումը, վորի մասին ձեռքեկուցեցի։ Նա ասել է. «մասսաների հեղափոխական շարժման վերելքը աճելու է նոր ուժով... վոր համաշխարհային տնտեսական կրիզիսը մի շարք յերկրներում գերաճելու

ե քաղաքական կրիզիսի... վոր բուրժուազիան դրությունից դուրս գալու չեղք ե վորոնեկու հետագա ֆաշիզացիայի մեջ՝ ներքին քաղաքականության ասպարիզում, դրա համար ոգտագործելով բոլոր ռեակցիոն ուժերը, դրանց թվում չեղ սոցիալ-դեմոկրատիային... վոր բուրժուազիան յեղք ե վորոնեկու նոր իմպերիալիստական պատերազմի յեղ ինտերվենցիայի մեջ՝ արտաքին քաղաքականության ասպարիզում... վոր պրոլետարիատը պայքար մղելով կապիտալիստական շահագործման յեղ պատերազմի վտանգի դեմ, յեղք ե վորոնեկու հեղափոխության մեջ»։

Վոչ մի կասկած, վոր կհաղթի պրոլետարիատը՝ Լենինի դրոշի տակ, Կոմունիստական ինտերնացիոնալի դեկավարությամբ, ընկ. Ստալինի գլխավորությամբ։

ՊԱՏԵՐԱՋՄԻ ՎՏԱՆԳԸ

Այժմ պատերազմի վտանգը հսկայանց արագ ե աճում։

Կուսակցության 16-րդ համագումարում ընկ. Ստալինը կուսակցության քաղաքական հաշվետվության մեջ ասել է.

«Կամի ճյուղ, վորին կրիզիսը չի համակել. այդ ճյուղը—ազմական արդյունաճնաբերությունն է։ Նա շարունակ աճում է. հնայելով կրիզիսին։ Բուրժուական պետությունները կատաղի կերպով զինվում ու գերազինվում են պատերազմի համար։ Իսկ պատերազմը իմպերիալիստներին հարկավոր ե, վորովհետեւ դա միակ միջոցն է աշխարհը վերաբաժանելու, սպառման շուկան, հումուլթի աղբյուրները, կապիտալ ներդնելու վայրերը վերաբաժանելու համար»։

Մոտերքս Կուսակցին հանդես ե չեկել իր «Բոլշևիզմի զմը փակուղում» գրքույկով։ Նա, վորպես բուրժուազիայի հավատարիմ սպասավոր՝ ուղղակի մատնանում ե խորհրդային Միությունը, գտնելով, վոր միմիայն բուրժուազիայի կամ ինչպես նա ե արտահայտվում, դեմոկրատիայի հաղթությունն Ռուսաստանում՝ համաշխարհային կապիտալիստական արքյունաբերության համար ուսական շուկա բաց կանի։ «Յեթե համաշխարհային իմպերիալիստների համար Ռուսաստանի

շուկան «ազատ» շահագործելու այդպիսի հնարավորութուն լինելու, ապա դրանով, — ասում են նա, — սկիզբ կդրվի մի պրոցեսի, վորը վերջի վերջո կհաղթահարեր այն արտափելի կրիզիսը, վոր ներկայումս ծանրանում է ժամանակակից բոլոր արդյունաբերական յերկրների վրա: Դժբախտաբար, այդ շուկան (Խորհրդային Միությունը — Վ. Պ.) մնում է առանց վորև նշանակութան մինչև այն ժամանակ, քանի վոր իշխում է բոլշևիզմը»:

Նա ուղղակի բուրժուազիայի համար կրիզիսից դուրս դալու միջոց վոչ միայն առհասարակ պատերազմն է մատնանշում, այլ պատերազմը՝ հատկապես Խորհրդային Միության դեմ:

Հայտնի է, վոր Ա. զ. գ. ե. ի. Լիգան մի ամբողջ շարք կոնֆերանսներ ու նիստեր է հրավիրում գիտաթավման հարցերի վերաբերմամբ, բայց նա տակետակ զբաղվում է նաև ուրիշ գործերով:

Վերջերս իտալական գիտվորական բժիշկներից մեկը — Ֆ. Ե. Բեռնի — վորը մասնակցում է կամ կապված է այս կամ այն ձևով Ազգերի Լիգայի աշխատանքի հետ, — տվել է այն միլիոնների շատ մանրամասն վերլուծությունը, վորոնք կարելի է գործադրել բակտերիոլոգիական պատերազմում, ընդ սմին առանձնապես «նարմար» է համարում նա խոլերան, տիֆն ու ժանդախտը, վորովհետև «այդ մի կը բռնեք լայնորեն տարածվելու ու մահացնելու հատկությունը հետ միասին ունին հիվանդացնելու ու մահացնելու մեծ տոկոս»:

Իդուր չե, վոր ընկ. Մոլոտովը Խորհրդային Միության Կենտգործկոմի վերջին նստաշրջանում տված իր գեկուցման մեջ մատնանշել է, վոր «բոլոր յեվ մեկն տեղի պըռտեկցիոնիզմ ու գերպըռտեկցիոնիզմ մտցնելու պատճառով, տնտեսական պայքարը նարգեն դարձել է իսկական տնտեսական պատերազմ առանձին կապիտալիստական պետությունների միջև: Դարձյալ մի յերկու քայլ յեվ շուկայի համար մղվող պայքարը կդառնա իմպերիալիստական պատերազմների: Իմպերիալիստական նոր ազդեցական ավանտյուրաների վտանգն աճում է: Խորհրդային Միությունն առանձնապես պետք է հաշվի առնի կապիտալիստական հարձակման վտանգը: Մենք հաստատ դիտենք, վոր վորոշ դիվանագիտական կարի-

ներ են ելում ներկայումս մեկն ապակի վերպով քննվում են մեր Խորհրդային Միության վրա ուղմական հարձակում գործելու հարցը»:

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՅԲԱՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Կապիտալի համաշխարհային գիշատիչները քննում են Խորհրդային Միության վրա հարձակում գործելու պլանները: սակայն մեր կողմն է պատմությունն ու համաշխարային բանվորական շարժումը:

Մենք ունենք, որինակ, Գերմանիայում ուժեղ պրոլետարիատ, վորը հեղափոխության և քաղաքացիական պատերազմի փորձն ունի:

Պարզ է, վոր մեր չեղբայրները — բոլոր յերկրների պրոլետարները՝ Կոմինտերնի ու Պրոֆինտերնի ղեկավարութամբ՝ կազմակերպվում են կրիզիսից դուրս գալու հեղափոխական յեղքի համար, պաշարելով տնտեսական կրիզիսը քաղաքական ու հեղափոխական կրիզիսի գերաճեցնելու համար:

Այդպես է դրությունը Գերմանիայում, Լեհաստանում, Սպանիայում, Չինաստանում և Հնդկաստանում:

Չինաստանի տերիտորիայի մի վեցերորդական մասը Խորհրդային շարժումով է բռնված:

Չինաստանում կարմիր բանակ կա, վորը խոշոր ուժ է ներկայացնում: Վերջին կոմիսերում նա ջախջախել է Չան-Կայ-շիի 15 դիվիզիաները: Միայն հենց Յ. զ. յ. ս. յ. յ. վերջին կոմիսերում նա մոտ 20 հազար զորի է վերցրել, գրավել 17 հազարից ավելի հրացան և այլն: Բանվորա-գյուղացիական կարմիր գվարդիայի և յերիտասարդական գվարդիայի բազմաթիվ ջոկատներն ոգնում են կարմիր բանակին, վորը հերոսական պայքար է մղում Խորհրդային իշխանության համար Չինաստանի կոմունիստական կուսակցության ղեկավարութամբ:

Դա — ասիական մայր ցամաքում. իսկ յեվրոպական մայրցամաքում, մանավանդ Գերմանիայում, մեծապես աճել է հեղափոխական շարժումն ու ամրապնդվել են կոմունիստական չեղբայրական կուսակցությունները:

1930 թվի սեպտեմբերին գերմանական կոմկուսն ունեցել է 120 հազար անդամ և ստացել է 4,5 միլիոն ձայն. այժմ նա ունի 300 հազարից ավելի անդամ:

Վորպես պատասխան ֆաշիստական տերրորի Գերմանիայի պրոլետարիատը մի շարք ղեպքերում (Բրաունշվիգի քաղաքական գործադուլի զենքն է կիրառում:

Աշխատանքի արտադրողականության աճումը նախագծված է 22%: Ինքնարժեքի իջեցումը—7%: Աշխատավարձի աճումը արդյունաբերական բանվորների համար—11%, տրանսպորտի բանվորների համար—13%: Կապի աշխատանքի աճումը—25%:

Գյուղական տնտեսության աճումը պիտի կազմի—21%: Մենք պետք է գյուղական տնտեսությանը սեփական արտադրության տրակտորներ մատակարարելն ապահովենք՝ մեկ միլիոն ձիու ուժից վոչ պակաս: Մեքենա-տրակտորային կայանների թիվը կհասցրվի 3,10-ի:

Մի շարք կարևորագույն խնդիրներ են դրվում արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ մեր աշխատանքի վերակազմակերպման, մասնավորապես, դրվում է բամբակի բերքատվությունը բարձրացնելու խնդիրը:

Բանվորների նյութական-կուլտուրական և կենցաղային դրությունը բարելավելու հետ կապված 1932 թվին մի շարք միջոցներ են նախագծված և անպայման կիրառործվեն:

Մեր Խորհրդային Միության բանվոր դասակարգը—արդյունաբերության, տրանսպորտի և գյուղական տնտեսության բանվորների ու ծառայողների թիվը կհասնի 21 միլիոն հոգու:

Լուսավորության, գիտության, կադրերի, սոցալի համար հատկացվում են հսկայական, միլիարդավոր գումարներ, աճումը կազմում է մոտ 40%: 1932 թվին բարձրագույն դպրոցները պիտի ավարտեն 56 հազար հոգի, տեխնիկումները—175 հազար հոգի, բանֆակները—121 հազար և ֆաբրիկաները—364 հազար:

Այդ ամենը կենսագործելու համար անհրաժեշտ է լիովին իրականացնել ընկ. Ստալինի վեց պայմանները: Դա հավթանակի բանալին է: Ով վոր աչժմ այդ բանը չի հասկանում, նա բոլշևիկ չէ: Ով աչդ պայմանները չի կենսագործում, նա կամ ոպորտունիստ է կամ դասակարգային թշնամի:

1932 թվին մենք պետք է ապահովենք վոչ միայն քանակական ցուցանիշները, այլև ծավալենք հսկայական, լարված պայքար սոցիալիստական վորակի համար, վորակական ցուցանիշների համար: Մենք պետք է վճռական հաջողություններ ձեռք բերենք Խորհրդային Միությունում արտասահմանյան տեխնիկական կախումից ազատե-

լու գործում: Մենք պետք է ամենամեծ չափով ամրապնդենք համաշխարհային պրոլետարական հեղափոխության դինաշտ հանգիստցող Խորհրդային Միություն պաշտպանունակությունը:

II. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՑ ՀԵՏՈ

ՎԵԿԱՊԵ-ի (բ) 16-րդ համագումարից հետո մոտ տարի ու կես է անցել:

Մենք այժմ գնում ենք դեպի համամիութենական 17-րդ կոնգրեսներն:

Ի՞նչ արդյունքներ ունենք այդ ժամանակաշրջանում ամբողջ կուսակցության, Անդրկովկասյան կուսկազմակերպության, Ադրբեջանի և Բաքվի կազմակերպությունների համար:

«16-րդ համագումարը—դա ամբողջ ֆրոնտում սոցիալիզմի ծավալումն հարձակման, կոլեկտիվիզմի—վորպես դասակարգի լիկվիդացիայի և համատարած կոլեկտիվացման կենսագործման համագումարն է».— այսպես է բնութագրել ընկ. Ստալինը 16-րդ համագումարը:

Ահա մի քանի հանրագումարային տվյալներ. 1931 թվին խորհրդային Միության ժողովրդական չեկամուտը հսկայական կերպով աճել է, ընդ վորում սոցիալիստական սեկտորի տեսակարար կշիռն արդեն կազմել է 81,5%: 1932 թվին ժողովրդական չեկամուտի մեջ սոցիալիստական սեկտորի տեսակարար կշիռը կազմելու է 91%:

Խորհ. Միության տնտեսությունների 62%-ը և գյուղացիական ցանքերի 79%-ը կոլեկտիվացրված է:

Ահա, թե ինչու, ընկերներ, մենք հաստատապես կարող ենք ասել, վոր խորհրդային Միությունում մենք նվաճել ենք պրոլետարիատի հիմնական դիրքերը և քաղաքում և գյուղում, վոր «ովում» հարցը և քաղաքում և գյուղում, և արդյունաբերության բնագավառում և գյուղական տնտեսությունում բնագավառում անդարձ կերպով վճռված է պրոլետարիատի ու կոլխոզային գյուղացիության ոգտին, սոցիալիզմի ոգտին:

1931 թվին մենք խորհրդային Միության մեջ ավարտել ենք սոցիալիստական

եկոնոմիկայի հիմքի կառուցումը և այժմ ձեռնարկում ենք այդ հիմքի վրա սոցիալիստական տնտեսություն ու սոցիալիստական հասարակություն շենքի հետագա կառուցմանը, բոլոր ֆրոնտներում մեր սոցիալիստական հարձակման հետագա ծավալմանը:

Կա ելի մի պայման, վոր բնորոշում է մեր կուսակցության ուղին 16-րդ համագումարից հետո՝ ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի և ընկ. Ստալինի ղեկավարությամբ, — յես ինկատի ունիմ կուսակցության հիմնական լոզունգի—«հասնել և անցնել» լոզունգի կատարումը:

Ահա փաստերը: Նավթային 5-ամյակը կատարված է 2 ու կես տարում: Նավթահամաձևեր ավարտված են քաշխարհիս 2-րդ տեղն ենք նվաճել: Վենեցուելան, վոր մինչև այժմ 2-րդ տեղն էր բռնում, շատ հետ է շարժված:

Մենք աշխարհում չորրորդ տեղն ենք նվաճել մետաղածուծան վերաբերմամբ, Անգլիայից առաջ անցնելով:

Մենք հաստատապես սկսել ենք առաջին տեղերից մեկը դուրս գալ՝ գյուղատնտեսական մեքենաների արտադրության դործում: 1931 թվի վերջին ամիսները տրակտորների 2 ինկուզործում մենք առաջ ենք անցել անգլիայի ամենաառաջին յերկրից—Միացյալ Նահանգներից:

Զուգումաձուլման մեջ 1931 թվին մենք մեր չետեն ենք թողել Անգլիային, իսկ այս տարի մենք պետք է առաջ անցնենք Գերմանիայից և Ֆրանսիայից: 1932 թվին մենք պետք է տանք այնքան չուգուն, վորքան տալիս են Գերմանիան ու Բելգիան միասին վերցրած: 1932 թ. մենք պետք է աշխարհում 2-րդ տեղը բռնենք չուգունաձուլման մեջ:

9 միլ. 450 հազար տոնն պողպատ պիտի տանք 1932 թ.: Դա նշանակում է, վոր մեր չետեղ պիտի թողնենք Անգլիային, Ֆրանսիային և Գերմանիային և պողպատաձուլման մեջ աշխարհում սկսել ենք յերկրորդ տեղը բռնել:

Խորհրդային մեքենայաշինության ընդհանուր ծրագիրը 1932 թվին կազմում է հսկայական գումար—6 միլիարդ 800 միլիոն ուղերի: Դա նշանակում է, վոր մեքենաների տր-

տառադրման ծավալով մենք աշխարհիս 2-րդ տեղը կբռնենք, վոր մենք կանցնենք Փերմանիայից:

Ածուխի վերաբերմամբ մենք արդեն առաջ ենք անցել Ֆրանսիայից և 1932 թվին պիտի մոտենանք գերմանական ածխահանության չափին:

Բամբակացանի տարածության կողմից մենք արդեն առաջ ենք անցել Յեգիպտոսից՝ աշխարհիս 3-րդ տեղը բռնելով Միացյալ Նահանգներից ու Հնդկաստանից հետո:

10 միլիարդ 700 միլիոն ուրբի—ահա արդյունաբերության շինարարության ծավալը 1932 թվին: Մենք այժմ ավելի ենք կառուցում, քան թե աշխարհիս վորքեն յերկիր:

Ճիշտ է, ընկերներ, այդ հաջողություններից մեր գլուխները չպիտի պտտվեն: Մենք վոչ մի վայրկյան անգամ չենք կարող հանգիստ նստել: Մենք պետք է հենց 1932 թվին, ինչ ել վոր լինի, ամբողջովին ծավալենք տնտեսության կարևորագույն ճյուղերը—վառելիքի արդյունաբերությունը, մետաղագործությունը և մեքենաշինությունը, ամենից առաջ մեքենաշինությունը՝ յերկաթուղային տրանսպորտի համար: Դրանք այն ճյուղերն են, վորոնցից կախված է ինդուստրացումը, վորոնցից կախված է Խորհրդային Միության պաշտպանունակության ամրապնդումը: Մենք պետք է հաշվի առնենք, վոր 1932 թվի այդ նպատակադրումը պիտի արտացոլի մեր բոլոր գործնական աշխատանքների մեջ:

Արդյունաբերության բոլոր մասցած ճյուղերը, վորոնք սարքավորում, հումքեր և եներգիա են մատակարարում մետաղագործությանը, վառելիքի արդյունաբերությանը, մեքենաշինությանը և տրանսպորտին, պետք է այնպես աշխատեն, վոր ժողովրդական տնտեսության այդ վճռահան ճյուղերի բոլոր կարիքները լիովին բավարարեն: Այդ հարցում մեզ մոտ հավասարանք լինել չի կարող: Այդ հիմնական ճյուղերը վճռում են սոցիալիստական շինարարության հետագա հաջողության խնդիրը, հետագա հաջող պայ-

քարն՝ ընդդեմ այն հնարավոր փորձերի, վոր կարվեն մեր սոցիալիստական հայրենիքի ստեղծագործական, շինարարական գործն ու խաղաղ աշխատանքը խանգարելու համար:

16-րդ համագումարից հետո մեր կուսակցության տարած հաղթանակները համաշխարհապատմական նշանակութուն ունեն: Նրանք հիմնված են լենինյան սկզբունքների անաղարտության համար մղվող անհաշտ պայքարի վրա, Վեյսկոֆ-ի (բ) Կենտկոմի ղեկավարությունում Մարքսի ու Լենինի հեղափոխական պրակտիկայի և թեորիայի կլասսիքական շաղկապման ու միասնության վրա, լենինի ղեկի հետագա մշակման ու զարգացման վրա՝ մեր կուսակցության ու համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ ընկ: Ստալինի կողմից, վորն առաջադրել է համատարած կոլլեկտիվացման հիման վրա Խորհ. Միության վերջին կապիտալիստական դասակարգի—կուլակության լիկվիդացիայի լողուն գը և ապահովել է ղեկավարությունը:

Վերջին տարիներս թեորիայում և պրակտիկայում, մասնա-ների փորձով լիովին ջախջախված է Խորհրդային Միությունում սոցիալիզմի կառուցման հնարավորության բուրժուական-տրոցկիստական ժխտումը: Այդ հակահեղափոխական կոնտրաբանդայի քողարկման եներս խոթելու նոր փորձերը մերկացված են ու կշախջախվեն թե Վեյսկոֆ-ում (բ) և թե Կոմինտերնում:

Լիակատոր կերպով խորտակվել է «կազմակերպված կապիտալիզմի» աջ, բուխարինյան թեորիան, վորը սահմանակցվում է բուրժուազիայի ու սոցիալ-դեմոկրատիայի դադափարախոսության հետ:

Կուսակցության հիմնական գծի համար, չերկու ֆրոնտում ուղորտունիղմի ու հաշտվողականության դեմ մղվող պայքարում կուսակցությունն աճել է, ամրապնդել է իր շարքերի բոլորիկյան միասնությունը և միաձուլությունը՝ լենինի ղեկի սկզբունքային գիրքերում:

Վեյսկոֆ-ի (բ) Կենտկոմի և ընկ. Ստալինի ղեկավարությամբ այդ հաջողությունները ձեռք բերելով մենք համարձակորեն առաջ ենք գնում դեպի համաշխարհային Հոկտեմբերը՝ հաղթահարելով դժվարությունը, դեն շարտեկով արգելքներ:

ԱՆԴՐԿՈՎԱԿԱՍՅԱՆ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Այս ժամանակաշրջանում Անդրկովկասյան կուսակազմակերպություններ մի շարք մեծ փորձությունների և յենթարկվել: Ընկ. Լեւոնը Անդրկովկասի կոմունիստներին ուղղած նամակում գրել է. «Ամենից ավելի կարևորն այն է, վորպեսզի Անդրկովկասի կոմունիստները հասկանան իրենց դրուժյան, իրենց հանրապետութային կոմունիստների դրուժյան յուրահատուկ լինելը և որ հրապարակապես դրուժյունից ու պայմաններից, հասկանան, թե անբաժնի է վոչ թե ընդ որին ապրել մեր պրակտիկան, այլ մտածված կերպով. ձեռքով և կոնկրետ պայմանների տարբերության համեմատ»:

Անդրկովկասյան ֆեդերացիայի պայմաններում կոնկրետ առանձնահատկությունների այս անալիզն ու հաշվառումը շատ ավելի բարդ են: Պետք է ուղղակի ասել, վոր վերջին 1 ու կես տարում ՎեկԱՊԵ-ի (բ) Անդրֆեդերացիայի դեկավարության մեջ այդ նկատմամբ թույլ է տվել կուսակցության քաղաքականության մի շարք լուրջ սխալներ ու ծոռամբեր: Այդ մասին խոսում է նաև ՎեկԱՊԵ-ի (բ) Կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի վորոշումը:

Դուրս, ամենքդ գիտեք այն պայքարի մասին, վոր տանում էին Անդրբերկրկոմի նախկին քարտուղար Լոմինաձեն և նրա խմբակը կուսակցության հիմնական գծի դեմ: Նրանք Անդրկովկասում մեխանիկական «ձախ» վարչարարություն էին կիրառում: Վերջին հաշվով նրանք աջ ոպորտունիստների հետ յերկերեսանի բլոկի հանգան:

Անդրկովկասի կազմակերպությունը քիչ ուժ չի սպառել, վոր լիկվիդացիայի յենթարկել այդ դեկավարության պատճառած ամբողջ վնասը և ծանր հետևանքները: Առանձնապես հսկայական պայքար է տարել Անդրկովկասի առաջատար կազմակերպությունը—մեր Բագվի փառապանծ կազմակերպությունը:

Անդրբերկրկոմի հետևյալ դեկավարությունը ընկ. Քարթվե-լաշվիլու գլխավորությամբ՝ նույնպես մի շարք քաղաքական անհալուրջ սխալներ է թույլ տվել:

ՎեկԱՊԵ-ի (բ) Կենտկոմում հանրապետական կենտկոմների ու Անդրբերկրկոմի դեկուցման ժամանակ ասվել է, թե Անդրկովկասյան կազմակերպության գլխավոր նվաճումն այն է, վոր

վերջերս սկսել են կարևորություն տալ տնտեսական հարցերին: Այդ վերաբերում է, մանավանդ, Վրաստանին ու Ադրբեջանին, վորովհետև Հայաստանը դեռ 3 տարի առաջ սկսել էր հետաքրքրվել շինարարությամբ: Իսկ Վրաստանում ու Ադրբեջանում տրնտեսություն հարցերը մինչև վերջերս սև աշխատանք էին համարում—գերադասում էին ամեն ինչի մասին դատարկաբանել ու զրուցել: Ներկայումս հասկացել են արդեն տնտեսական հարցերի կարևորությունը:

Գլխավոր սխալը նրա մեջ էր կայանում, վոր գյուղացիական հարցում կուսակցության քաղաքականությունը պրակտիկայում աղավաղվել էր:

Անդրկովկասը հաց սպառող ռայոն է, տեխնիկական մշակույթների ռայոն է, այն ինչ վարչարարման միջոցով անց էին կացրնում հացամթերման չափազանցած պլաններ և պետությունը հարկադրված էր ուղղել այդ ծոռամբերը՝ վերադարձնելով գյուղացիությանը, մանավանդ Վրաստանում, ավելի շատ հաց, քան թե նրանից մթերվում էր:

Մի շարք ռայոններում արագացրած կոլեկտիվացում էր կատարվում աշխատ, ինչպես այդ տեղի ունեցող 1929 թվին հացահատիկային ռայոններում:

Անդրֆեդերացիայի դեկավարության գործում «ուկրաճական» մոտեցում է լիցել: Անդրֆեդերացիայի առանձնությունները հաշվի առնելու մասին լենինյան պատգամը խախտված էր: «Ուկրաճական» մոտեցումը նշանակում է չմտածված, մեխանիկական մոտեցում Անդրկովկասի ուրույն պայմաններին, կուսակցության գծի ծոռամբ Անդրկովկասի պայմաններում՝ գյուղացիական քաղաքականության հիմնական հարցերում և ազգային հարցում:

Ազգային հարցում յեղած սխալը նրա մեջ էր կայանում, վոր Անդրբերկրկոմն սկսել էր իր ձեռքը գցել գրեթե բոլոր հիմնական տնտեսական ֆունկցիաներն, անդիմացնելով ազգային կենտկոմները:

ՎեկԱՊԵ-ի (բ) Կենտկոմը քանիցս մատնանշել էր, թե անհրաժեշտ է ճիշտ կիրառել լենինյան ազգային քաղաքականությունը առանց ծոռամբերի՝ ճշում գործ դնելու կամ Անդրֆեդերացիայի թուլացնելու ուղղությամբ, Անդրբերկրկոմի ու Անդրկովկասյան ժողովրդապետների ֆունկցիաները ճիշտ կերպով բաժանելու հիման վրա:

Յերբորդ ցավը, վորի մասին ասված է ՎեկԱՊԵ-ի (բ) Կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշման մեջ Անդրկովկասյան կուսակազմակերպությունների վերաբերմամբ, դա «ատամանշինան» է,

այսինքն աշխատողները առաջ քաշելը վոչ թե գործարար-ակըզբունքային հատկանիշով, այլ այն չափոցով, թե համ մարդն է, հեմն է ձայն տալիս, համ հետ է գինի խմում, համ մոտ է լինում:

Այդպիսի պայմաններում չերևան է գալիս վոչ թե կուսակցական մի կամք, այլ մի քանի կամք ըստ «ատամանների» թվի, վորոնցից ամեն մեկն ունի իր գրուպպական գիսցիպլինան:

Ինչպես հայտնի է, բոլշևիկական կուսակցութեան մեջ կա և պետք է լինի մի գիսցիպլինա—կուսակցութեան գիսցիպլինան և մի կամք—կուսակցութեան կամքը:

Պարզ է, վորտեղ «ատամանչինա» կա, այնտեղ բոլշևիկյան գիսցիպլինան վատ է, իսկ վորտեղ վատ է բոլշևիկյան գիսցիպլինան, այնտեղ ել պրակտիկ աշխատանքը տապալվում է, այնտեղ ել առանձին խավերի ու առանձին կոմունիստների վրա ուժեղանում է մեզ շրջապատող և ոպորտունիզմի, «ատամանչինայի» ու գրուպպիչ ինայի բազա հանդիսացող մանր բուրժուական տարերքի դասակարգային խորթ ազդեցութեան ներգործութեանը:

Անդրկովկասյան կազմակերպութեանների և Բագվի առաջավոր կազմակերպութեան ամենազխտավոր խնդիրն է՝ պաշտարել բոլշևիկյան կուսակցութեան ամրապնդման և «ատամանչինայի» լիովին լիկվիդացիայի չենթարկելու համար:

Սակայն, ընկերներ, այդ ժամանակաշրջանի բոլոր փորձութեանները, ծանր պայքարից հետո, Վեյ Ա. Պե-ի (բ) կենտկոմի ու ընկ. Ստալինի աջակցութեամբ՝ Անդրկովկասյան կազմակերպութեանն այնուամենայնիվ ավելի ամրապնդված չեղավ, ապահովելով կուսակցութեան հիմնական գծի կիրառումը՝ Անդրյերկրկոմի նորոգված ղեկավարութեան տակ, վորի գլուխ են կանգնած այժմ փորձված բոլշևիկներ ու հեղափոխականներ—ընկ. ընկ. Մամիա Որախելաշվիլին ու Բերեան, վորոնք իրենց արժանիքներով բավականաչափ հայտնի են վոչ միայն Անդրերկրկովկասում, այլ և խորհրդային Միութեանում:

ԲԱԳՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱԴԻԿՈՄԿՈՒՍԸ (Բ)

Բնորոշելով Բագվի և Ադրբեջանի կազմակերպութեանների անցած ուղին՝ անհրաժեշտ է հիշեցնել ձեզ Վեյ Ա. Պե-ի (բ) կենտ-

կոմի վորոշումը՝ Գիկալոի ղեկավարութեան փոխելու մասին: Ինչ է յեղել ասված 1930 թվի ոգոստոսի 3-ի այդ վորոշման մեջ—տարի ու կես սրանից առաջ:

Կենտրոնական Կոմիտեն ասել է. «Բագվի ստորին կուսակազմակերպութեանները ամառն և ամբարապնդման առողջ պրոցեսները հետ միասին՝ Ադրկովկասի (բ) և Բագվի կազմակերպութեան վերնախավում վոչ միայն հին խմբավորումներն են վերանորոգվել, այլ և անսկզբունք խմբակային պայքարը բոլշևիկյան կուսակցութեան մեջ միանգամայն անթույլատրելի բնույթ է ստացել: Ակտիվ վերնախավում զարգացել են կազմակերպութեան շարքերը կազմավորված ու կուսակցական-խորհրդային ու տնտեսական-կոոպերատիվային որդանները դրական աշխատանքը քայքայող բամբասանքները, անսկզբութեանը գրուպպիչ շինան, վոխադարձ դարանումը»:

Առանձնապես մատնանշված է Յուսուֆ Կասիմովի կողմից անթույլատրելի խախտումն այն խոստումի, վոր նա տվել է կենտրոնական Կոմիտեին (նրան Ադրբեջան ուղարկելիս)՝ ոգնելու ղեկավարութեանն և նրա դեմ գրուպպական պայքար չառնելու:

«Կենտրոնական Կոմիտեն հավատացած է, վոր Ադրբեջանի կուսակցական կազմակերպութեանը կհարողանա՝ գոյութեան ու նեցող նվաճումները հիման վրա՝ արմատախիլ անել անսկզբունք գրուպպիչ շինայի մնացորդներն և կազմակերպութեանը համախմբել սոցիալիստական շինարարութեան դժվարագոյն խնդիրները ու կուսակցութեան հիմնական գիծն իրականացնելու շուրջը, խորհրդային, տնտեսական և կուլտուրական շինարարութեան գործին քաշելու ու պրոլետարական նորանոր կադրեր, մասնավորապես թուրքերից»:

«Կենտրոնական Կոմիտեն պահանջում է ամբողջ կուսակազմակերպութեանից և մասնավորապես թուրքական կադրերից՝ վճռա-

կան քեկուժ առաջացնել՝ Ադրբեջանի գլու-
ղում կուսակցական և խորհրդային աշխա-
տանքի ու ժեղացման և նախապես գլուխա-
րութւնն ամենամեծ չափերով ծավալելու
համար»:

Գիւլալօի ղեկավարութունը փոխելուց հետո՝ Բազմի
կազմակերպութունը շուտով սկսեց սուր պայքար մղել Լոմի-
նաձեի և նրա խմբակի դեմ, այն յերկրեսանինների դեմ, վո-
րոնք ձգտում էին իրանց ձեռքը դրել, մանավանդ, Բազմի կազ-
մակերպութունը:

Իսկ լուրենգներով եր պայքարում նրանց դեմ մեր Բազմի
կազմակերպութունը:

Կուսակցութեան հիմնական դժի, իսկական բոլշեւիկյան ղե-
կավարութեան և Անդրկովկասյան ֆեդերացիայի ամրապնդման,
ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտրոնական Կոմիտեի համար անհաշտ պայքա-
րի լուրենգներով:

Ակներե և, վոր Լոմինաձեի ֆրակցիոն խմբակը ֆրակցիոն
առաջադրութունն ունեցել՝ տիրապետել Բազմի, վորպես Անդրը-
կովկասի արդյունաբերական ամենամեծ կետի կազմակերպու-
թյանը: Հենց այդ նպատակով և Լոմինաձեի գաղափորել եր ու-
ժերը Անդրկովկասի կազմակերպութուններում և, ամենից առաջ
Բազմի կազմակերպութեան մեջ:

Յեթե նրա խմբակին թույլ տային Բազմի կազմակերպու-
թյանը տիրելու, ապա Լոմինաձեի չեր հապաղի ուժի լեզվով
խոսելու:

Սակայն, ընկերներ, կուսակցութեան և ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտ-
րոնական Կոմիտեի դեմ Լոմինաձեի և նրա խմբակի յերկրեսա-
նի պայքարը մերկացրվել և և նրանք արժանաւոր ջախջախիչ
հաղահարված են ստացել Բազմի կազմակերպութունից:

Դրանից հետո Բազմի կազմակերպութունը մեծ և յեռան-
դուն աշխատանք և ծավալել տնտեսական ու սոցիալիստական
շինարարութեան ֆրոնտում:

Դուք գիտե՞ք, թե ինչպիսի հսկայական վոլեպոլիթամբ և
տարվել դարնան բամբակացանք՝ լարված պայքար մղելով պլանի
իրագործման վերաբերմամբ լեղած թերահավատութեան դեմ:

«205 հազար հեկտար» և ցանքսի ավարտումը «մալիսի
10-ին» — այս թվերը կուսակցութեան ամենաժողովրդական լո-
ղունգներն էին դարձել, այդ խմբում էին վոչ միայն Ադրբեջա-
նի կոլխոզնիկներն ու գյուղացիները: Այդ պլանային առաջա-
դրութունների իրագործմանն էին հետևում Բազմի բանվորներն,

ամբողջ Բազմի կազմակերպութունը՝ լարված ուղադրութեամբ,
իրանց բրիգադներն ողնութեան ուղարկելով Ադրբեջանի
գյուղին:

Ապա ընկ. Ստալինի հայտնի հեռագիրը նավադնացութեան
պատրաստվելու մասին և դրա հետ կապված՝ մասսաների մորի-
լիզացիան: Յես կարծում եմ, վոր այստեղ ներկա գտնվողներն
այդ բանը լավ են հիշում:

Վորպես պատասխան կուսակցութեան առաջնորդի այդ դի-
մումի՝ մասսաների իրոք բոլշեւիկյան մորիլիզացիա և ծավալվել—
նավադնացութեան և նավթը արտահանելու խնդիրների ապա-
հովման շուրջը:

Նավադնացութեան առաջին շրջանի սկիզբն անցել է ընկ.
Ստալինի այդ հրահանգի իրագործման նշանի տակ և ահագին
արդյունք է տվել:

Վոլգայի գետային նավատորմի առաջին
ուսուցչը նախ ի կողմից լիովին ապահով-
ված էր:

Այն ստուգումից, վոր կուսակցութեան Կենտրոնական Կո-
միտեն ավել եր Բազմի կազմակերպութեանը, — վերջինս դուրս է
յեկել պատվով ու հաջողութեամբ:

Հետևյալը — դա մեր նախապես հաղթա-
նակն է, նախ ի հնգամյակը 2 ու կես տա-
րում կատարելը:

Այդ հաղթանակը համամիութենական և համաշխարհային
հսկայական նշանակութուն ունի, վորովհետև նավթը հանդիսա-
նում և համաշխարհային քաղաքականութեան արտադրանք:

Այդ հաղթանակը նշվել է Կենտրոնական որդանների կող-
մից և մի շարք վոլջոնյաների մեջ ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտրոնական
Կոմիտեի հատուկ ներազգացութուն և բացառիկ ուղադիր վերա-
բերմունք եր զգացվում. զգացվում եր առանձին ցանկութուն,
վորպիսով Բազմի կազմակերպութունը, վորպես Անդրկովկասի
ու խորհրդային Միութեան առաջավոր պրոլետարական կազմա-
կերպութուն, ամբողջապես և լիովին լծվելով գործնական աշխա-
տանքի՝ Անդրկովկասի ու խորհրդային Միութեան սոցիալիստա-
կան տնտեսութեան կառուցողների և հարվածայինների առաջա-
դր շարքերում քայլի:

Ընկ. Ստալինը մեզ գրել է. «Վոլջոնյանում և մ
Ադնեվթի և Գրոզնեվթի բանվորներին ու
վարչական և տեխնիկական անձնակազմին՝
հնգամյակը 2 ու կես տարում կատարելու»

առթիւ: Շնորհավորում եմ ձեր հաղթանակն, ընկերներ: Կեցցեն խորհրդային Միության բանվորները, վորոնք ջարդել են կապիտալիզմի շղթաներն ու իրանց չերկրի տերերն են դարձել: Կեցցեն խորհրդային իշխանությունը: Կեցցեն բոլշևիկներին կուսակցությունը: Ի. Ստալին:

Բազմի և Գրոզնու նավթայինների հաջողութունը Դոնբասի ածխահանքերին չեռանդ են ներշնչել ու նրանց մոտ սոցիալիստական նոր ալիք առաջացրել:

Սակայն նորից հակակուսակցական խմբակային պայքար է ծագել Ադրբեյջանի և Բազմի կազմակերպութայիններում:

Չնայած կազմակերպութային աշխատանքի մեջ յեղած ահազին առաջխաղացմանը և զգալի արդյունքներին, դառնվեցին մարդիկ, վորոնց սրտովը չեր նավթի, բամբակի ու կոլեկտիվացման համար գործարար, պրակտիկ աշխատանքը. նրանք այլ ուղղութուն վերցրին:

Այդ մարդիկ պայքար են մղում վոչ միայն Կենտկոմի ու Բազմի Կոմիտեի ներկա ղեկավարութային դեմ: Նրանք պայքար կմղեն ամեն մի ղեկավարութային դեմ, վորը կանգնած լիներ բոլշևիկյան սկզբունքային դիրքերում, վորովհետև նրանք պայքար են մղում իրանց հակակուսակցական խմբավորումների, իրանց «ատամանների» ազդեցութային համար:

Որչեկտիվորեն նրանք պայքար են մղում կուսակցութային հիմնական դժի դեմ, բոլշևիկյան դիսցիպլինան խախտելու համար՝ բոլշևիկյան կուսակցականութունը խանգարելով Ադրբեյջանի և Բազմի կազմակերպութայիններում:

Վեկտոր (բ) Կենտրոնական Կոմիտեն իր 1931 թ. հոկտ. 31-ի վորոշման մեջ այդ դրուպովչինան դատապարտել է վորպես հակակուսակցական դրուպովչինա:

Ո՞վ է յեղել այդ խմբակային պայքարի ղեկավարութային մեջ: Պետք է ասել, վոր այդ ժամանակաշրջանում տարբեր խմբակցութայինների յուրահատուկ բոկ է յեղել. — Յուսուֆ Կասիմովի (գարձյալ Յուսուֆ), Մարիյեվի, Մեշկովի և ուրիշների խմբակն՝ անկախ ազգայնութունից՝ պայքարը հիմնականում դնում եր մեծ ապետական կարգի տրամադրություններին ու սխալներին ուղիով:

Յեվ դա պատահական չէ, վորովհետև այդ խմբակը չեղել է Բազմի նախկին «հին» (1929 թվի) ղեկավարութունից, վորն այդ կարգի սխալներով եր տառապում:

Այսպես, որինակ, այն ղեկավարութունը թերագնահատությամբ և անուշադրությամբ եր վերաբերում Ադրբեյջանի դրուպի սոցիալիստական վերակառուցման խնդիրներին ու աշխատանքին:

Իշխանութային գլուխ կանգնածներն՝ իրանց մոնոպոլիստներ համարելով՝ փակվել են մի նեղ շրջանում, բարձրից են նայում և սեղմում են ամեն ու առաջ քաշումը, մասնավորապես թուրքական պրուետարական կադրերին, վորոնք պայքարում են կուսակցութային հիմնական դժի համար, նավթի, բամբակի, ինքնաքննադատութային և ներկուսակցական դեմոկրատիայի համար:

Պատահական չէ, վոր այդ սխալներն ամենից շուտաջ կարգի գծով են դնում:

Արժե մատնանշել Սդրպրոֆխորհրդի, «Բակ. Բարոչու» և Շմիտգի անվան գործարանի հարվածայինների բավական գնահատելի նախաձեռնութեւնը. նրանք են յեղել տնտեսաշվային բրիգադների Բագվի ընդհանուր հավաքի նախաձեռնողները:

Կարծես, Խորհրդային Միութեան մեջ դա տնտեսաշվային բրիգադների առաջին հավաքներից մեկն ե:

Պիտի աշխատել, վորպեսզի առաջին հերթին առանձին պրոֆմիութեւնական գործիչները չթերագնահատեն սոցմրցման ու աշխատանքի սոցիալիստական կազմակերպութեան աչդ նոր ձևերը. իսկ յեթե աչդպիսի թերագնահատումներ լինեն, պետք ե միանգամից ամենավճռական, անխնա հակահարված տալ նրանց՝ մերկացնելով աչդ բանը վորպես գործնականում աջ ոպորտունիզմի արտահայտութեւն:

Ծ ա ն ո թ ա ն ա լ ո վ կ ա ն ա ն ց մ ե ջ տ ա ր վ ո դ ա շ խ ա տ ա ն ք ի ն ՝ մ Եր կազմակերպութեան մասսայական աշխատանքի տեսակետից՝ պետք ե նշել այն աճումը, վոր մենք ունենք կանանց կադրերի վերաբերմամբ: Կուսակցութեան մեջ 1929 թվին կանայք կազմում եին 5%, աչդ տոկոսն այժմ բարձրացել ե 8-ի: Աճում կա, բայց այնուամենայնիվ դանդաղ աճում ե: Պետք ե ուժեղացնել տեմպերը:

Յեա արդեն մատնանշել եմ կանանց հատուկ ակտիվությունը՝ անգրագիտության վերացման գործում: Դրան պետք է ավելացնել կանանց ակտիվության աճումը խորհրդային աշխատանքում և կոլտոգային շարժման մեջ, կանանց ձգտումը՝ դուրս գալու լայն ճանապարհի վրա, ակտիվ կերպով մասնակցելու սոցիալիստական շինարարությանը: Մենք այդ ակիբին պետք է լիովին և ամբողջովին աջակցենք ու կանանց շարքերում կուսակցության ու բոլոր կազմակերպութիւնների կողմից տարվող մասսայական աշխատանքի ղեկավարութիւնն ապահովենք:

Արտադրության մեջ ել կանանց թիվն աճել է: Ազնիվութեմ կանանց թիվը 8%-ից աճել է 12-ի, տրանսպորտում կանայք կազմում են 6,7%, իսկ կարի արդյունաբերութիւնում — 72%, վորից 26%-ը թրքուհիներ:

IX. ԿԱԴՐԵՐԸ

Բարձրագույն դպրոցների և բարձրագույն տեխնիկական դպրոցների թիվը, վոր 1930 թվին յեղել է 4, 1931-ին գարձել է 16, ալսինքն մեծացել է 4 անգամ:

Բարձրագույն դպրոցներում թուրք ուսանողների տոկոսը 32-ից բարձրացել է ավելի քան 50-ի, դրանից 7% թրքուհիներ:

Ա. զ. գ. ա. ի. ն. վ. ո. ք. ր. ա. մ. ա. ս. ո. ւ. թ. չ. ո. ւ. ն. ե. ր. — թաթարների, թալիշների, լեզգիների, լեռնային հրեաների տոկոսն այժմ կազմում է 2,7: Դա մեր թուրք տեղն է բարձրագույն դպրոցներում և բարձրագույն տեխնիկական դպրոցներում. այդ բանը հետադայում պետք է ուղղել:

Բարձրագույն դպրոցներում բանվորական կազմը 19%-ից բարձրացել է 44-ի. կուսակցության անդամների ու թեկնածուների թիվը — 10%-ից հասել է 20-ի, կոմյերիտականների — 16%-ից հասել է 36%-ի:

Տեխնիկականների թիվը 40-ից հասել է 54-ի, նրանց ուսանողների թիվը — 10 հազարից հասել է 18,700-ի, նրանցից թուրքերի թիվը 6,015-ից աճել է 12,768-ի (նրանցից 2111 թրքուհի):

Բանֆակների ուսանողների թիվը, վոր 1930 թվին յեղել է 951, աճել է 6,180-ի 1931 թվին (նրանցից թուրք յեղել են 386, իսկ այժմ 3,066):

Պրոֆեսորների, դոցենտների և գիտական գործիչների մեջ ել թուրքական կադրերն աճել են: Յեթե 28—29 թվին նրանք կազմել են 32% — 170 — հոգի, ապա 1931 թվին արդեն 44,5% — 459 հոգի:

Չնայած կադրերի մեծ աճմանը, կուսակցության կադրեր պատրաստելու համար տարած ամբողջ աշխատանքին, հետագայում պահանջվում է ել ավելի անխնայ աշխատանք՝ մասնագետների, մասնավորապես թուրքերի, առանձնապես թրքուհիների նոր կադրեր աճեցնելու և պատրաստելու համար:

Խնդիրը նրանում է կազանում, վոր պետք է վոչ միայն նրանց տեխնիկորեն պատ-

բաստենք, այլև քաղաքականորեն. քաղաք-
նենք, վորպեսզի աճող կադրերը՝ տիրապե-
տելով տեխնիկայի բարձունքներին՝ դաստի-
րակվեն ու պատրաստվեն վորպես սոցիա-
լիստական տնտեսության ու սոցիալիստա-
կան հասարակության մարտիկներ, վորպես
մասնաճիւղ՝ կուսակցության հիմնական
զօրն նվիրված կազմակերպչներ: Ահա այդ
կողմը, սակայն, դեռևս բավականին լրջորեն հետ ե մնում:

X. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ՅԵՎ ԱՆԴՐՔԵԴԵՐԱ- ՑԻԱՅԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Ամենից առաջ անհրաժեշտ ե շեշտել կուսակցության լե-
նինյան ազգային քաղաքականության ու սոցիալիստական ամ-
բողջ շինարարության անխղիչ կապը, կուսակցության լենին-
յան ազգային քաղաքականության կապը սոցիալիզմի ամբողջ
ֆրոնտով տարվող լայն հարձակման հետ:

Մեր ազգային քաղաքականությունը չի կարելի բաժանել
նավթի, տրանսպորտի, բամբակի, կոլեկտիվացման, կադրերի
նախապատրաստության, իդեոլոգիական ֆրոնտի պայքարի հար-
ցերից:

Բազմազգի Բազմում ու խորհրդային Ադրբեջանում նավթի
բամբակի, կոլեկտիվացման բոլոր ցուցանիշներն ու հաջողու-
թյունները կարող են ձեռք բերվել միմիայն կուսակցության
լենինյան ազգային քաղաքականությունն ուղիղ տանելու շնոր-
հիվ: Միևնույն ժամանակ նավթի, բամբակի,
կադրերի, կոլեկտիվացման, սոցշինարում-
թյան համար մղվող պայքարում միայն լուծ-
վում են ազգային քաղաքականության հիմ-
նական պրոբլեմները խորհրդային Ադրբե-
ջանում:

Կուսակցության 16-րդ համագումարում ընկ. Ստալինը
խոսելով թեքումների մասին, ասել ե. «Ազգային թեքում-
ներն այնքան նկատելի չեն, ինչպես «ձախ»
ու աջ թեքումները: Նրանց կարելի երևելու
չեւ «սողացող» թեքումներ: Բայց այդ դեռ չի
նշանակում, թե նրանք գոյություն չունեն:
Վոչ գոյություն ունին և, վոր գլխավորն ե,
աճում են»:

Ադրբեջանի ու Բազմի կազմակերպչությունների պայքարի
պրակտիկան ու փորձը, մասնավորապես գրուպովչիկների դեմ
մղված պայքարի փորձը լիովին հաստատվել են ընկ. Ստալինի
խոսքերը:

Անդրերկրկումի վերջին ղեկավարության սխալների մասին
այստեղ կրկնելու կարիք չկա, դրանց մասին ասվել ե զեկուցման

սկզբում: Բայց այդ առթիվ անհրաժեշտ է առանձնապես շեշտել զլիսավոր վտանգ հանդիսացող մեծապետական շովինիզմի դեմ մղվող պայքարի նշանակութունը:

«Դեպի մեծապետական շովինիզմը յեղած թեքման ելուժյունը կայանում է ազգային տարբերությունները, լեզուներ, կուլտուրան, կենցաղն աչքաթող անելու ձգտման մեջ, ազգային հանրապետություններին ու շրջաններին լիկվիդացիան նախապատրաստելու ձգտման մեջ»:

«Այդ թեքումն արտացոլում է մեռնող դասակարգերի, առաջ տիրապետող վելիկոռուսական ազգության ձգտումը՝ վերադարձնելու կորցրած արտոնությունները» (Ստալին):

Անհրաժեշտ է այստեղ հիշել նաև դեպի տեղական նացիոնալիզմը յեղած թեքման ելուժյուն մասին:

«Դեպի տեղական նացիոնալիզմը յեղած թեքման ելուժյունը նրա մեջ կայանում, վոր ձգտում են առանձնանալ ու փակվել իրենց ազգային կեղևի շրջանակներում, ձգտում են քողարկել իրենց ազգության մեջ յեղած դասակարգային հակասությունները, ձգտում են վելիկոռուսական շովինիզմից պաշտպանվել՝ սոցիալիստական շինարարության ընդհանուր հոսանքից հեռանալու միջոցով, ձգտում են չտեսնել ինչ վոր մոտեցնում ու միացնում է խորհրդային Միության ազգություններին աշխատավոր մասսաներին և տեսնել միայն այն, ինչ վոր կարող են ըրանց հեռացնել իրարից: Դեպի տեղական նացիոնալիզմը յեղած թեքումը արտացոլում է առաջները ճնշված ազգության մեռնող դասակարգի անբավականությունը պրոլետարիատի դիկտատուրայի ուժմից, նրանց ձգտումն է առանձնանալ իրենց ազգային պետության մեջ և այնտեղ հաստատել իրենց դասակարգային տիրապետությունը» (Ստալին):

Ահա այդ թեքումների ելուժյունն ու բնույթագրվել:

Անդրերկրկումի նոր դեկավարությունը մի շարք կարևորագույն վորոշումներ ընդունելով Անդրֆեդերացիայի ղեկավարու-

թյան մեջ թույլ տված սխալներն ուղղելու համար՝ լիովին ապահովում է կուսակցության ազգային քաղաքականության ուղիղ կիրառումը:

Տնտեսության մի շարք ճյուղերում տարվող ապակենտրոնացումը վոչ միայն չի թուլացնի Անդրֆեդերացիայի տնտեսական ու քաղաքական ուժը, այլ, ընդհակառակը, կամրապնդի նրան՝ ազգային հանրապետությունների լայն ինքնագործությունն ու տնտեսական նախաձեռնությունը ծավալելու, ֆեդերատիվ ու հանրապետական որգանների պարտականություններն ուղիղ սահմանագծելու հիման վրա:

Կուսակցության լենինյան ազգային քաղաքականության հիման վրա՝ Անդրֆեդերացիայի տնտեսա-քաղաքական իսկական ամրապնդումը կարելի է ապահովել միմիայն պայքար մղելով լեռկու Ֆրոնտում, թե չափազանց կենտրոնացման, հանրապետական որգանները ճնշելու ու անդիմացելու գծով յեղած սխալների ու ծուռմեքերի դեմ, և թե Անդրֆեդերացիան թուլացնելու կամ կուսակցական որգանների մեջ՝ լենինյան կուսակցությանը խորթ՝ ֆեդերալիզմի սկզբունքներ մոցնելու փորձերի դեմ:

Ընկ. Որախելաշվիլի ու մի գրքուկում, վոր «Լենինն ու Անդրֆեդերացիան» անունն է կրում ասված է. «Անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերացիայի գաղափարը Անդրկովկասյան կուսակցական ու խորհրդային որգանների որակարգի մեջ է մտել 1921 թվի աշնանը: Այդ հարցի վերաբերմամբ Ռուսկոմկուսի (բ) Կովկասյան Բյուրոյի հանրաժանութ՝ վորոշումը հանվել է Բագվում: Այդ վորոշումը պայքարի յեղակետ դարձել՝ Անդրկովկասյան հանրապետությունների պետական շաղկապման համար»:

Անդրֆեդերացիայի ստեղծման որորանը Բագու է: Անդրֆեդերացիայի զլիսավոր հենարանն ու արաջատար ուժը Բագվի պրոլետարիատն է: Ահա թե ինչու ընկերներ, Անդրֆեդերացիայի 10-ամյակի առթիվ անհրաժեշտ է Բագվի կոնֆերանսում առանձնապես շեշտել Բագվի կազմակերպության պատասխանատվությունը՝ Անդրֆեդերացիայի տնտեսա-քաղաքական իսկական ու անշեղ ամրապնդման համար, շեշտել Բագվի կազմակերպության պատասխանատվությունը՝ լենինյան ազգային քաղաքականությունը Անդրֆեդերացիայի ամրապնդման գործում:

Անդրֆեդերացիայի 10-ամյակը, վոր այս տարի պետք է տոնենք կուսակցության կուրհրդային իշխանություն մեծ ազդեցության հաղթանակն է, Բագվի պրոլետարիատի հաղթանակը, Բագվի, Ադրբեյջանի, վրաստանի ու Հայաստանի կազմակերպություններին և ամբողջ Անդրկովկասյան կազմակերպության հաղթանակը:

XI. ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲԱԳՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Ամենից առաջ ի՞նչ դրուժյան մեջ է գտնվում Բագվի կազմակերպությունը: Ռայոնական կուսակոնֆերանսների արդյունքներն անսխալ պատասխան են տալիս այդ հարցին:

Ի՞նչ ենք տեսել ռայոնական կուսակոնֆերանսներում:

Մեր կազմակերպության հսկայական ակտիվություն, նրա ղեկավար կադրերի աճում, նրա գաղափարա-քաղաքական մակարդակի աճում:

Կոնֆերանսներն անցել են սկզբունքային մեծ բարձրություն, Բագվի կազմակերպություն համալսմբան նշանի տակ՝ կուսակցությունում գծի սկզբունքային հիմքերի վրա:

Բարձր մակարդակի վրա է տարվել նույնպես և մի շարք տնտեսական հարցերի քննությունը: Զգացվում էր պատասխանատվություն նավթի, տրանսպորտի, բամբակի, սոցիալիստական շինարարության համար՝ Աղբեջանում, Անդրֆեդերացիայում ու ամբողջ Խորհրդային Միությունում:

Համաշխարհային քաղաքականություն և համաշխարհային պրոլետարական հեղափոխություն հարցերը ռայոնական կուսակոնֆերանսների ուղղորդության կենտրոնում են յեղել:

Ռայոնական կոնֆերանսները նորոգել են ռազմաների ղեկավարությունը:

Ռազմիկների անցյալ կազմում ստանդարտի բանվորներ յեղել են 41%, այժմվա կազմում—45½%; Անցյալ կազմում թուրքեր յեղել են 39%, այժմ—42½%: հայեր—8%, այժմ—19%:

Յեռ կարծում եմ, ընկերներ, վոր դա լավագույն և միանգամայն ռբյեկտիվ պատկերացումն է, թե ինչպես են Անդրկովկասի (ք) կենտկոմն ու Բագվի կոմիտեն տանում լենինյան ազգային քաղաքականությունը:

Ուրիշ ել ինչ կա բնորոշ ռայոնական կուսակոնֆերանսների համար:

Հստակություն և անհաշտ վողակաճություն թյունն այն պաշտարում, վոր մղվում է կուսակ-

ցություն հիմնական գծի, բոլշևիկյան կուսակցականություն թյան համար, թեքումներն ու գրեթե անվշտիկներն դեմ:

Առանձնապես անհրաժեշտ է նշել կուսակցական մասնագետների կադրերի քաղաքական աճումը:

Յերիտասարդ կոմունիստ մասնագետները պատվավոր տեղ են գրավել ռազմական կոնֆերանսների ղեկավարությունում:

Դա նշան է այն բանի, վոր աճած և տնտեսությունում արդեն ղեկավարող այդ կադրերը տնտեսական ֆրոնտում կատարած իրենց գործնական աշխատանքը կապում են կուսակցական աշխատանքի, կուսակցական կյանքի հետ: Նրանց այդ կուսակցականությունը բնորոշում է նրանց, վորպես մասնագետների իսկական կազմակերպիչներն ու սոցիալիզմ կառուցողներն:

Այնտեղ նույնպես մենք տեսել ենք հիմնականագետներն կողմից գեպի կուսակցությունն արած շրջագործի շատ ցայտուն արտահայտություն:

Լենինյան ռայոնում ինժեներների ու տեխնիկների անունից ընկ. Պատուլը հայտարարել է հետևյալը.—«Այժմ, յերբ մենք մեր հագամյակը վճռող նոր տարվա շեմքին ենք գտնվում... այս կոնֆերանսում ինժեներներն ու տեխնիկները պետք է պարտավորված տան, վոր կուսակցությունը կառավարություն առաջագրված յունները մենք անպաման կկատարենք: Դրան գրավակա են բանվոր գասակարգի աճող խանդավառությունն ու մեզ հաղթանակից հաղթանակը թյունն ու կուսակցությունն անշեղ ղեկավարությունը:

Մենք պարտավորվում ենք մոտագույն ժամանակներս, ընկ. Ստալինի վեց ցուցմունքների իրացման հիման վրա՝ վերացնել ադիմությունը, վերացնել հավասարաբն ու հանձնած ռազմի համար պատասխանատվության սխալմը մտցնել: Անհրաժեշտ է, վոր ինժեներներն ու տեխնիկները համալսվեն Լենինի կուսակցության շուրջը:

Այժմ չպետք է լինեն խորհրդային լիախությունը հավատարիմ, բայց կուսակցությունից դուրս գտնվող ինժեներներն ու տեխնիկներն:

Այժմ ինժեներներն ու տեխնիկները պետք է կուսակցության հետ միասին առաջ քայլեն, կուսակցության ղեկավարությամբ,—և վորպեսզի իրագործեն հայտարարված լուրջ գնումները, լենինյան ուսյոնի ինժեներներն ու տեխնիկները—ընկ. ընկ. Ումբելիան, Պառլը, Սիրոտովը, Նադիևը և Եպիցը իրենց դիմումներն են ներկայացրել՝ կուսակցության շարքերը մտնելու համար:

Ռադիկալ կուսակցության ներքին ծավալվել և բողոքական առողջ ինքնաքննադատությունը: Քննադատել են խիստ՝ առանց ուշք դարձնելու անձնավորություններին:

Յես չեմ կասկածում, վոր ինքնաքննադատությունն էլ ավելի բարձր մակարդակով կծավալվի Բագվի կոնֆերանսում և Ադրբեյջանի համագումարում:

Ահագին ուշադրություն է յեղել դարձրված Անդրֆեդերացիայի ու աղբյուրի քաղաքականության ամրապնդման հարցերին:

Ընկ. Ստալինի նամակը, կուսակցական կանոնների հարցերը ուսյոնական կոնֆերանսներում պատվավոր տեղ են բռնել և կոնֆերանսներին լարված ուշադրությունը գրավել:

Պետք է մատնանշել նույնպես և մասսաների հետ կապի ամրապնդումը. այդ կապը ցուցադրվեց ռադիկալ կոնֆերանսներում և վորջույնների առանձին բնույթով: Մի շարք պատվիրակներ կուսակցության վորջույններին իրանց կոնկրետ գործնական նվաճումները, ուսյոնի տվիչ լավագույն հարվածայիններին՝ տասնչափներով ու հարյուրներով՝ կուսակցության շարքերը մտնելու մասին:

Բագվի կոնֆերանսն ու Ադրբեյջանի համագումարը պետք է տարվեն Համամիութենական կուսակցության նախապատրաստվելու նշանի տակ, վորին մենք պարտավոր ենք ռադիկալ տալ նավթով, բամբակով, կոլեկտիվացման, բանվորական մատակարարման, կուլտուրայի անման քանակական ու վորական ցուցանիշներով և այլն:

Բագվի կազմակերպության անելիքն է—ամրապնդել ձեռք բերած հաջողությունները, վորոնք կազմակերպության գործնական աշխատանքի մեծ վերելքի արդյունքն են հանդիսանում:

Հաշվի առնելով սխալներն ու թերությունները՝ պետք է ապահովել Բագվի կազմակերպությունն, վորպես Անդրկովկասի

ու խորհրդային Միության առաջավոր պրոլետարական կազմակերպության ամբողջ աշխատանքի ստեղծագործական վերելքը:

Մի քանի թվեր կրենք Ադրկուսի (բ) Բագվի կազմակերպության կազմի մասին:

Անդրկուսի (բ) ընդհանուր կազմն առ 1-ն հունվարի 1932 թվի՝ կազմում է 68,152 հոգի. բանվորներ—70%, արտագործներ—54%, թուրք 45%:

Բագվի կազմակերպության կազմը—40,347 հոգի: Այս տարի մենք աճել ենք 27%-ով:

Յերբ անցյալ տարիները փոքր ինչ կանգ է առել Բագվի կազմակերպության աճումը, ապա հաշվետվական ժամանակաշրջանում մենք նորմալ կերպով ենք աճել:

Պետք է ասել, վոր վորական ցուցանիշների կողմից ևս մեր կուսակցությանը աճումը լիովին բավարար է:

1931 թվին կուսակցության շարքերն ընդունվածներին բանվորները—95,5% են. առաջ արտագրական բանվորը կազմել է 91%, իսկ այժմ—94%, մեծ է բանվորների արտագրական և հասարակական ստաժը. նրանց ճնշող մեծամասնությունը հարվածայիններ են:

Աղագային կազմի կողմից, 1930 թվին կուսակցության շարքերն են մտել—թուրքեր—26%, 1931 թվին—27%:

1930 թվին կին ընդունված է 5,8%, իսկ այժմ 10%:

Կոմյերիտի կուսակցության հարցեր—25%, իսկ 1931 թ.—22,8%: Դա նշանակում է, վոր բանվոր կոմյերիտականներին կուսակցությանը հանձնելու գործը հետ է մնում: Դա նշանակում է, վոր քաղաքական-դաստիարակչական աշխատանքը կոմյերիտի կուսակցությանը հետ է մնում, վորը պետք է խիստ լրջորեն հաշվի առնել:

Մեր ռեզերվները հսկայական են, Բագվի բանվորների շարքերում կուսակցական խավը մոտ 22% է, իսկ Ադրբեյջանում—26%:

Ընդհանուր առմամբ ըստ բոլոր ցուցանիշների, մեր կուսակցության աճումը բավարար է կատարվում:

Այդ աճումը կատարվել է նավթի, տրանսպորտի, ընկ. Ստալինի վեց պայմանների, լենինյան աղագային քաղաքականության թյան և ընդհանրապես կուսակցության գծի,

բուլղարիկայան կուսակցականութիւն համար, թեքուումներ, գրուած շէնքերն ալ «առաջնաշէնք» դեմ մղվող պայքարում:

Սակայն, ընկերներ, հավաքագրման աշխատանքները քաղաքականութիւնն տանելով պետք է նախագահող քաղաքականութիւնը թվերի հետեւից վաղելուց, պետք է ապահովել վստահական ընտրութիւնը, կազմակերպութիւնն աճման սոցիալական և ազգային կազմը ի հաշի հարվածային բանվորներ, կանանց ու կոմիւնիստականներ:

Ամբողջ կազմակերպութիւնն դադարաւորապէս քաղաքական, բուլղարիկայան դաստիարակութիւնը, ընկերներ, այժմ մեր ներկուսակցական աշխատանքի հիմնական ողակն է:

Ստորին ողակի մասին.—Վերջին ժամանակներս բաւականաչափ աճել են ցեխը ջրերը, մոտ 50%-ով:

Այժմ Բագրի կազմակերպութիւնն արդեն 575 ցեխը ջրեր ունի:

Ցեխը ջրերի բուրոնների անդամների քանակն աճել է 22-ով. յեղել է 2,500, իսկ այժմ 3000-ից ավելի է. նրանցից բանվորներ — 90,8%, թուրք — 31,3%:

Մեծ է կազմակերպչների քանակական և վորական աճումը:

Սակայն դեռ ևս բավարար ուշադրութիւն չի դարձվում կուսակազմակերպչներին: Դրան պետք է վերջ տալ:

Մի տարվա մեջ յերկու անգամից ավելի է աճել կուսակազմակերպչների թիվը, ըստ վորում կուսակազմակերպչների կազմի մեջ առաջ են քաշվում կանայք ու կոմիւնիստականներ:

Կուսակազմակերպչների կազմում թուրքեր չեղել են 25,6%, այժմ — 27,2%. հայեր չեղել են 24%, այժմ — 25%:

Այնքան է ստորին ողակի ամբողջական պրոցեսը, վոր արդեն տալիս է և կտա շատ մեծ արդիւնքներ՝ ձեռնարկութիւններ ի ամբողջ կուսաշխատանքի բարելաւման գործում:

Կազմակերպութիւնը պետք է հետագայում ավելի ուժեղացնի իր ուշադրութիւնը ստորին ողակի ամբողջական գործում:

Կան մի շարք բացասական մոմենտներ. առանձնապէս լիակատարանքի ստորին կուսակազմների հոսունութիւնը: Այդ բանը

մենք չպետք է թույլ տանք հետագայում. ամբողջելով կազմերը, նրանց մասնագիտացնելով, մենք պետք է ուժեղացնենք նրանց մեջ տարվող դաստիարակչական աշխատանքը, նույնպէս և բարելաւենք նրանց նյութական դրութիւնը, մանավանդ, ստորին կուսակազմի, վորն աշխատում է շատ ծանր պայմաններում, հաճախ չափազանց դժուարին բնագավառներում:

Ընկ. Ստալինի համակը բարձրացրել է կուսակցութիւնն զգաստութիւնը և մեր ամբողջ կուսակցութիւնն ու մյուս յերկրների չեղաբարեկան կուսակցութիւնները մորիլիզացիայի և յենթարկել՝ անհաշտ պայքար մղելու մեր լենինյան թեորիայի անադարտութիւնն համար:

Ընկ. Ստալինի համակն անմիջապէս կապված է մամուլի մեջ ունեցած նրա նախընթաց յելույթների և ղեկուցումների հետ, վոր հսկայական, նոր ներդրումներ են մարքս-լենինյան թեորիայի մեջ:

Նրանք ժամանակակից ետապում կուսակցութիւնն մարքս-լենինյան թեորիան զարգացնում են, վորպէս կուսակցութիւնն հեղափոխական պայքարի հիմնական զինք:

Բաւական է հիշել ազրարնիկ-մարքսիստների կոնֆերանսում արտասանած ճառը, վորտեղ ընկ. Ստալինը առաջադրել է կուսակցութիւնը—վորպէս դասակարգ վերացնելու լողունը, նրա խորին թեորետիկ կարգի և ղեկավար, ակտուալ նշանակութիւնն ունեցող կլասիկ հողմածները՝ Խորհ. Միութիւնն կուսակազմման և ինդուստրացման հարցերի վերաբերմամբ:

Ընկ. Ստալինը, վորպէս մեր կուսակցութիւնն ու համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ՝ սոցիալիստական շինարարութիւնն ղեկավարութիւն և պրոլետարիատի համաշխարհային հաղթանակը կազմակերպելու գործում տեսականի և գործնականի շողկապման և միասնութիւնն լենինյան որինականքի և տալիս:

Ընկ. Ստալինը մարքս-լենինյան թեորիան ներկայեւորելով յուրահատուկ պայմանների ու առանձնահատկութիւնների վերաբերմամբ կիրառելու կլասիկ որինականքի և տալիս մեզ:

Մենք պետք է ուսումնասիրելով ընկ. Ստալինի աշխատութիւնները, նրա բոլոր յելույթներ ի սորի մաստը՝ կուսակցութիւնն թեորետիկ աշխատանքը ավելի բարձր աստիճանի հասցնենք:

Ամբողջ կուսակցութիւնը՝ Վեյսկոօ-ի (բ) կենտրոնական Կոմիտեի ու ընկ. Ստալինի գլխավորութեամբ՝ ձգտում է այն

բանին, վորպեսզի ընդհանրացնի իր հսկայական փորձը, զարգացնելով կուսակցական թեորիան:

Ընկ. Ստալինն իր աշխատություններում ու յետագայում մարքս-լենինյան թեորիան բարձրացնում են նրա զարգացման նոր փուլին, վոր կապված է խորհրդային Միությունում սոցիալիզմի վերջնական հաղթանակի, իմպերիալիստական պատերազմների ու պրոլետարական հեղափոխությունների չեղարկումից շրջանի հետ:

Պետք է ուղղակի ասել, վոր թե կուսակցական թեորիայի հարցում, և թե ընկ. Ստալինի նամակում մատնանշված մի շարք սխալների մերկացման հետ կապված հետագա չեղումներում ու դեպքերում մենք բավական լուրջ մոմենտներ ունինք, վոր առանձին ընկերների վերաբերմամբ չեբեքնում ավելորդ յեղրակացություններ են հասցնում:

Վերջերք Բազվի կազմակերպության մեջ ունեցած որինակը՝ Շահումյանի ինստիտուտի դիրեկտոր, կուսակցության Բազվի կոմիտեի կուլտպրոպագանդի վարիչ ընկ. Ռախմետովի վերաբերմամբ:

Նա մասնակցել է ընկ. Յարոսլավսկու խմբագրությամբ հրատարակված «Կուսակցության պատմության» ալֆմ հոշակավոր 4-հատորյակի կազմելուն:

Ռախմետովն ու 4-հատորյակը կազմելուն այլ մասնակցողներն ահագին քանակությամբ սխալներ են արել՝ տրոցկիստական կոնտրաբանդա ներս խցկելով ու մեր կուսակցության պատմությունն աղավաղելով:

Իսկ ինչպե՞ս է վարվել ընկ. Ռախմետովը:

1933 թվի դեկտեմբերի 22-ին հանդես գալով Բազվի ակտիվում՝ նա վոչ մի խոսք չի ասել իր սխալների մասին. փոխանակ իր սխալները խոստովանելով՝ նա լռել է:

Հետո, նա վորոշ ներգործության տակ գրել է իր հայտարարությունը: Այնտեղ ևս նա լռության է մատնել մի շարք հարցեր, վոր պարտավոր եր լուսարանելու:

Մենք վորոշել ենք նրան հեռացնել Շահումյանի ինստիտուտից, կուլտպրոպագանդի վարիչի աշխատանքից, արգելել նրան դասավանդելու Բազվի բարձրագույն դպրոցներում և հանդիմանություն անել՝ նախադպրոցացումով:

Բայց սխալ կլինի այդ ամբողջ գործն այնպես չեն, վոր վրանց սխալները խոստովանող առանձին ընկերներին պատ-

ժել: Մասնավորապես ընկ. Ռախմետովի կողմից կարծես թե ցանկություն կա ընդունելու իր սխալները և ուղղելու, բայց այդ բանը նա այնպես չի անում, ինչպես հարկավոր է, բոլորիկորեն չի անում: Նա վոչ միայն պետք է իր աշխատակցությունները վերանայի, այլ և պետք է խորապես ստուգի, ուղղի ինքն իրան, այնպես, վոր ինքը դառնա իսկական, իսկ և իսկ անհաշտ բուշեի:

Յեա կարծում եմ, վոր մեր խնդիրն է՝ այդ բանում ոգնել նրան, — և այն, վոր Ադրեմոկուսի (բ) Բազվի կոմիտեն ու կենտրոնական կոմիտեն խիստ վորոշումներ են ընդունել, դա պետք է ստիպի նրան ուղղվելու:

Ընկ. Ստալինի նամակը շոշափում է կուսակցական թեորիայի մի շարք մեծ հարցեր, վոր վոչ թե մակերևութաբար, այլ շատ խոր կերպով պետք է, առաջին հերթին, կուսակցական ակտիվի և մեր կուսակցության հիմնական կադրերի սեփականությունը դարձնել:

Սխալ կլինի, չեթե բլիշներն այդ համարելով կուսակցության պատմությանն իրանց նվիրված լինելու ամենաբարձր նշան՝ կատարած սխալների համար սկսելն կուսակցությունից հեռացնել, մասնավոր, նրանց, ովքեր իրանց սխալներն ընդունում են և հույս են տալիս այդ սխալներն ուղղելու:

Գլխավորն այն է, վորպեսզի ապահովել թե լուրջ ուսումնասիրությունը և թե ուշադրությունը մեր կուսակցության թեորիայի և կուսակցության պատմության բոլոր հարցերի վերաբերմամբ և դրանով էլ ապահովել մեր կադրերի թեորիայի մակարդակի բարձրացումը:

Պայքարելով նոր մասնակցության դեմ, մեր կացնելով տրոցկիստական կոնտրաբանդիստներին, մենք վոչ մի բոլոր աչքաթող չպետք է անենք ու պետք է ամենավճռական պայքար մղենք ներկա փուլում գլխավոր վտանգ հանդիսացող աջ ոպորտունիզմի թեորիայի ու պրակտիկայի դեմ:

Գրուպովչինայի մասին շատ չեմ խոսի:

Միայն վերջին որերից մի որինակ կբերեմ:

Շահումյանի ու յոսի կուսկոնֆերանսում հանդես են չեկել մի շարք ընկերներ և հայտարարել, վոր Նավթային ինստիտուտում ամեն ինչ չե վոր բարեհաջող է, վոր կան մի շարք դեպքեր, յերբ այնտեղ հավաքվում են նախկին գրուպովչինայի կադրերը, չերբ Նավթային ինստիտուտի միջոցները

ծախսվում են վոչ թե հատկացրած նպատակների համար, այլ գրուպայական շահերի համար, մարդկանց ուղարկում են մի շարք տեղեր (Մոսկվա, Լենինգրադ) գրուպայական առաջադրություններով, վոր այդ գործը գլխավորում է Նիկիտինը՝ Նավթային ինստիտուտի դիրեկտորը և Դիկմանը:

Նման կարգի հայտարարություններ ստացվել են նաև մեզնում—կուսակցության Բազմի կոմիտեից:

Այդ գործն սկսել է քննել Ադրկոմկուսի (ք) Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովը:

Ի՞նչ է պարզվել:

Հիմնականում այդ ամբողջ գործը հաստատվում է:

Ակներե է, վոր գրուպովչինայի, «ատամանչինայի» արմատները դեռևս կան, և պատահաբար չե, վոր հենց Նիկիտինն ու Դիկմանն են այդ գերում հանդես յեկել. այդ մարդիկ վաղուց կապված են վորոշ գրուպովչիկների հետ, կապված են «ատամանների» հետ:

Բայց բնորոշ է, թե ինչպես այժմ արդեն գրուպովչինայի ու «ատամանչինայի» այդ պոչերը փոխում են և այլասերվում՝ դառնալով դարձահետոյ, զգվելի մի բան:

Դիկմանի բնակարանում մի քանի անգամ մարդիկ հավաքվել են քեֆի: Իսկական հարեցողությունից հետո զբաղվել են քաղաքականությունը, կամ այսպես ասած՝ «քաղաքականությունը»: Թե ինչ արժե այդպիսի «քաղաքականությունը», զբավար չե պատկերացնել:

Դրա վրա շատ փոք է ծախսվել:

Սմբական կերուխումի համար հրավիրվել են մի շարք գործիչներ, տնտեսական բաժնի վարիչ Սորոկինին առաջարկություն են արել պատրաստվելու այդ քեֆին, ընդ սմին առաջարկել են այնքան բան գնել, վոր կերուխումից հետո յերկու շաբաթ բավականացնի ամբողջ ընտանիքին:

Կան ինքնաքննադատություն սեղմումի, տնավարիություն մի շարք փաստեր:

Այսպես ինչպես կարելի եր այդ բաներն անել՝ առանց ինքնաքննադատություն սեղմումի, առանց տնավարիություն:

Ամեն մի ազնիվ կոմունիստ իսկույն կմերկացներ այդ ամբողջ գործը:

Այդ բոլորից մի այդպիսի կեղտոտ կծիկ է հյուսվել՝ կուլկոմի նախկին քարտուղար Դերգուևովի ակտիվ մասնակցությունը և աջակցությունը:

Այդ արարքները կապված են այն բանի հետ, վոր մարդիկ մտածել են իրենց «ատամանական» հոգեբանությամբ. չեթե ինձ դրել են Նավթային ինստիտուտում, յեթե կուսակցությունն ինձ վստահացել է այդ գործը, նշանակում է բոլոր փողերն իմս են, ինչպես քեֆս տալիս է, այնպես էլ ծախսում եմ: Փողերը վստահացված են ինձ, նշանակում է մեր խմբակին—ինչպես ուղում, այնպես էլ ծախսում ենք:

Սկսել են ստուգել ավելի խոր, և պարզվում է, վոր այդ նույն Դիկմանը իր մարդկանց շրջանում ասել է՝ «Ստալինը յերկիրը դեպի խորտակում է տանում»:

Իհարկե, այդպիսի մարդկանց տեղը չէ մեր կուսակցությունը:

Այժմ ԱՆՆԻ-ում գործում է Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի և Ադրկոմկուսի (ք) Ֆարրիկա-գործարանային ռայկոմի բրիգադան, վորը կպարզի այն ամենն, ինչ այնտեղ կատարվում է:

Ել թնչ է հարկավոր համոզելու համար առանձին գործիչներին, վորոնք վոչ մի կերպ չեն կարողանում ձեռք քաշել գրուպայական պայքարից, «ատամանչինայից»:

Բազմի կազմակերպությունը մի քանի տարի զբաղվել է այդ հարցով և այժմ ել պայքարում է այդ յերևույթների դեմ, բոլորիկյան կուսակցականության համար:

Յես կարծում եմ, վոր ձեռք առնված միջոցների ու վորոշումների հետևանքով գրուպովչինան ջախջախված է հիմնովին (բուռն ծափահարություններ):

Բազմի փառապանծ, հզոր կազմակերպությունը տարել է և տանում է դրական, ըստ եղծագործական աշխատանք՝ սոցիալիստական շինարարություն ֆրոնտում, հաջթահարելով բոլոր դժվարությունները և արգելքները:

Յես կարծում եմ, վոր յեթե անցյալում յեղել են առանձին տրամադրություններ ու մինչև իսկ փորձեր լիկվիդացիայի յենթարկելու կուսակցության Բազմի Կոմիտեն, դա ըստ երևության ձգտում է յեղել դիմագրուպական ելու Բազմի կազմակերպությունը:

Մեր խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի ամբապնդենք Բազմի կազմակերպություն և Բազմի Կոմիտեի աշխատանքը՝ Ադրկոմկուսի:

կոմիտեի (բ) Կենտկոմի, Անդրկերկրի և Վեպուկի (բ) Կենտկոմի ղեկավարութեամբ:

Հետագայում ապահովել ընդունված վորոշումները կատարմանն ստուգումը, — դա պետք է լինի մեր աշխատանքի հիմնական սկզբունքը:

Ապահովել մարդկանց գործարար ու սկզբունքային ընտրութենան, ուժերի ճշգրիտ դասավորումը:

Բազմի կազմակերպութենան յեղել է, կա և կլինի Անդրկովկասի ու խորհրդային Միութեան առաջավոր պրոլետարական կազմակերպութենաներից մեկը:

Նա յեղել է, կա և կլինի Անդրֆեդերացիայի ու բոլշևիկյան Անդրյերկրի վրասահելի և անսասան հենարանը:

Նա յեղել է, կա և մինչև վերջ հավատարիմ կլինի Վեպուկի (բ) Կենտկոմին, վորն ընկ. Ստալինի ղեկավարութեամբ՝ խորհրդային Միութենան ու համաշխարհային պրոլետարիատին հաղթանակից — հաղթանակի դեպի համաշխարհային Հոկտեմբերի հաղթութենան ետանում: (Բռն, չերկարատե ծափահարութենան, վոր ովացիայի են փոխվում):

ԸՆԿ. ՊՈԼՈՆՍԿՈՒ ՃԱՌԸ ԱՊՐԿՈՄԿՈՄԿՈՒՄԻ (Բ) XI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

1932 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 19-ին

Ընկերներ, վաղը չե մյուս որը լրանում է 8 տարի՝ պրոլետարիատի հանճարեղ ուսուցիչ ու առաջնորդ ընկ. Լենինի մահվան օրից:

Մենք, ինչպես միշտ, բաց անելով մեր կուսակցական համագումարները պետք է հարգենք նրա հիշատակը և քաղաքացական կռիվների ու սոցիալարարութեան ֆրոնտներում պրոլետարական հեղափոխութեան գործի համար մղվող պայքարում ընկածների հիշատակը:

Մենք չենք կարող նաև մոռանալ Ադրկովկասի (բ) Կենտմի անդամ ընկ. Հուսի Հաջիևի մանը, վորն ընկել է մարտական դիրքում, բամբակի ու կոլեկտիվացման համար Ադրբեջանում մղվող պայքարում:

Խնդրում եմ վրոքի յելնել (բոլորը կանգնում են. չերաժշտախումբը մահվան քայլեր դնում):

Ընկերներ, Ադրկովկասի (բ) 11-րդ համագումարը բացվում է ռայոնական ու Բազմի 20-րդ՝ մեծ վոդեռութեամբ անցած՝ կուսկոնֆերանսներից հետո:

Նա՛ կուսակցութեան հիմնական գծի համար Ադրկովկասի (բ) մղած պայքարի մի ամբողջ ժամանակաշրջանի արդյունքների հանրագումարն է տալիս:

Ադրկովկասի (բ) 11-րդ համագումարում կենտկոմն ու ռայոնական կազմակերպութենաները պետք է հաշիվ տան՝ մասնավորապես, նավթի ու բամբակի վերաբերմամբ: Դրանից հետո Մոսկվայում բացվելու է Համամիութենական 17-րդ կուսկոնֆերանսը:

Համամիութենական կուսկոնֆերանսին մենք պարտավոր ենք առաջորդ տալ մեր կազմակերպութենաների՝ առաջին հերթին

նա վթի ու բամբակի վերաբերմամբ կատարած աշխատանքի արդյունքներով, կոլլեկտիվացման ու տրանսպորտի աշխատանքի արդյունքներով, Բագվի ու Ադրբեյջանի բանվորների և աշխատավորների նյութական—կոլլեկտորական ու քաղաքական մակարդակի բարձրացման ցուցանիշներով, իդեոլոգիական ֆրոնտում մեր կազմակերպություն մղած պայքարի և կոլսակցության լենինյան ազգային քաղաքականությունից կիրառման արդյունքներով:

Ընկերներ, կապիտալիստական աշխարհը զալարվում է չըտեսնված կրիզիսի ճիրաններում: Իմպերիալիստները նոր պատերազմ են պատրաստում, վորի սայրն առաջին հերթին ուղղված է Պորթո. Միության դեմ: Նրանք փորձում են կրիզիսից յեկնել իմպերիալիստական պատերազմների միջոցով՝ բանվոր դասակարգի, աշխատավորների և գաղութների ճնշված մասսաների հաշվին:

Ամբողջ աշխարհի պրոլետարիատը պայքարում է կրիզիսից յեկնելու հեղափոխական յեկքի համար:

Պորթ. Միությունում 1931 թ. մենք ավարտել ենք սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը՝ պայքարելով պրոլետարիատի բոլոր թշնամիների դեմ:

1932 թվին մենք հնգամյա կը կավարտենք 4 տարում:

Պորթ. Միությունում անդարձ կերպով վճռված է «ով ում» հարցը՝ պրոլետարիատի ու սոցիալիզմի ոգտին:

Պորթ. Միությունն ամրապնդվում է՝ վորպես համաշխարհային պրոլետարական հեղափոխության բաղա:

Մեր հաղթանակներն արդյունք են մեր կոլսակցության միակ ճիշտ լենինյան քաղաքականությունից և Վեյ Ա. Պե-ի (բ) լենինյան կենտկոմի իսկական բոլշևիկյան դեկավարությունից՝ կոլսակցության ու համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ ընկ. Ստալինի գլխավորությամբ:

Ադրկոմկոսի (բ) 11-րդ համագումարը բացվում է՝ բոլշևիկներին Պրագայի կոն

ֆերանսի 20-ամյա պատմական տարեդարձի օրը, վորը բացվել է 1912 թվի հունվարի 19-ին և աշխատել է մինչև հունվարի 30-ը:

Պրագայի կոնֆերանսը մեր բոլշևիկյան կոլսակցության մեջ բացառիկ նշանակություն ունի: Նա կարևորագույն ետապ է հանդիսացել կազմակերպչորեն ձեկակերպելու բոլշևիզմը, վորը գոյություն ունի իբրև հոսանք և իբրև կոլսակցության՝ սկսած 1903 թվից, և ընտրել է բոլշևիկյան կենտկոմ՝ լենինի գլխավորությամբ, վորի կազմի մեջ կոպտացիայի յենթարկվել ընկ. Ստալինը:

Պրագայի կոնֆերանսը կազմակերպելուն անմիջական ախտիվ մասնակցություն են ունեցել Բագվի և Թիֆլիսի կազմակերպությունները՝ հանձինս իրենց պատվիրակների—Ընկ. Ընկ. Սպանդարյանի և Որջոնիկի ձեի:

Պրագայի կոնֆերանսը նախապատրաստելու ուսակա կազմակերպչական կոմիտեի առաջին նիստը սկսվել է Բագվում ընկ. Ստ. Շահումյանի մասնակցությամբ և հետագայում, շնորհիվ ձեըբակալությունների, փոխադրվել է Թիֆլիս:

Պրագայի կոնֆերանսի պատվիրակներին կազմում յեղել է ընկ. Դոգագովը, վորն ախտեղ ներկա է:

Կոնֆերանսն ավարտելուց հետո՝ լենինը նրա մասին գրել է Մաքսիմ Գորկուն.—«Թանկագին Ալեքսեյ Մաքսիմովիչ, շուտով ձեզ կուղարկենք կոնֆերանսի վորոշումը: Վերջապես, հաջողվել է, չնայած լիկվիդատորական սրիկաներին, վերածնել կոլսակցություն, ունրա կենտկոմը: Հուսամ, վոր դուք կուրախանաք մեզ հետ միասին»:

Ախոր, Պրագայի կոնֆերանսի բացման 20-ամյա պատմական տարեդարձի օրը, լրանում է 20 տարի, ինչ լենինի աշակերտներից մեծագույնը, մեր կոլսակցության ու համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ ընկ. Ստալինն անփոփոխ կերպով մոնում է Վեյ Ա. Պե-ի (բ) կենտկոմի կազմում:

Ընկ. Ստալինին կյանքը, մանավանդ Վեյսկոպե-ի (բ) Կենտկոմում նրա լինելու առ 20 տարում, կապված են նրա մղած անհաշտ պայքարի հետ՝ լենինյան զմի համար, Լենինի համար՝ լենինյան կուսակցության համար:

1932 թվին լրանում են և՛ ընկ. Ստալինի Վեյսկոպե-ի (բ) Կենտկոմի գլխավոր քարտուղարի դերը լինելու 10-ամյակը:

Կուսակցությունը ու համաշխարհային բանվորական շարժումը ընկ. Ստալինին անվան հետ կապում են պրոլետարիատի հերոսական պայքարի ու համաշխարհային հաղթանակի առաջնորդի կլասիկ դեմքը:

Նրա ամենացայտուն գծերն են՝ անսասանությունը պայքարում, անսահման նվիրվածությունը կուսակցությանը, ցերեկաթի դիպցիպլինայ, անողորմ հետեվողականությունը — պրոլետարիատի թշնամիներին դեմ մղած պայքարում:

Մարքսի—Լենինի թեորիայի և դիալեկտիկական մատերիալիզմի ամենից կատարյալ կիրառում կուսակցության ու համաշխարհային պրոլետարիատի պայքարում՝ սոցիալիստական շինարարության և համաշխարհային պրոլետարական հեղափոխության համար, մարքս-լենինյան թեորիայի անհաշտ պաշտպանությունը՝ նրան աղավաղելու ու սոցիալիստական փորձերից և մարքս-լենինյան թեորիայի հետագա զարգացումը՝ խորհրդային Միությունում սոցիալիզմի վերջնական հաղթանակի նոր եռանկում ու համաշխարհային իմպերիալիստական պատերազմներին և պրոլետարական հեղափոխության ներքին 2-րդ շրջանում:

Ստալինը—դա կլասսիկ իսկական լենինյան իմի շողկապումն է հեղափոխական թեորիայի ու հեղափոխական պրակտիկայի միասնությունը կլասիկ իսկական լենինյան շողկապումն է:

Ստալինը—դա Մարքսի—Լենինի հեղափոխական թեորիան և դեկավարությունը դոգմա ծոցում թյան մեջ:

Նրա ղեկավարությունը կուսակցությանը ջանքերով Լենինի ժառանգությունը հափշտակելու և աշխատելու բոլոր փորձերը:

Ընկ. Ստալինի դեկավարությունը կուսակցությանը հետեւ շարքում գլխավոր գծի դեմ արված հարձակումները և ջանքերով դեմ արված «ձախ» սոցիալիստական հեղափոխական տրոցկիզմը, մերկացնելով հեղափոխական շարժման կանոնները, և հետագայում հաշտվողականությունը, և հետագայում անհաշտ պայքարն է տանում բոլոր վերդա անհաշտ պիզբուսներին անաղարտ մի հիմնական սկզբունքներին անաղարտությունը թյան համար, դարբնելով կուսակցության շարքերը մարքս-լենինյան թեորիային ու Լենինի ավանդներին հավատարիմ լինելու համար:

Ընկ. Ստալինի և Վեյսկոպե-ի (բ) Կենտկոմի դեկավարությունը մենք կառուցում ենք սոցիալիստական հասարակությունը, պայքարում ենք Հոկտեմբերի համաշխարհային հաղթանակի համար, և կհաղթահարենք (ծափահարություններ):

1932 թ. մենք տոնում ենք Անդրկովկասյան ֆերագիտայի տասնամյակը:

Դա կուսակցության մեծագույն նվաճումն է և լենինյան ազգային քաղաքականության ամենախոշոր հաղթանակներից մեկը:

Անդրկովկասյան ֆերագիտան, Վորը սկզբում կազմակերպել է վորպես Անդրկովկասի ժողովուրդների խաղաղ կենակցության պետական ձև, այս տարիների ընթացքում տնտեսապես ու քաղաքականապես աճել է ու զարգացել, լայնորեն ծավալելով Անդրկովկասում սոցիալիզմի շինարարությունը:

Անդրկովկասյան ֆերագիտան և կուսակցության ղեկավարությունը՝ ինդուստրիացման և կոլտոլային շարժման հիման վրա՝ ապահովել են Անդրկովկասի բանվորական ու աշխատավոր մասսաների կուլտուր-քաղաքական ու նյութական մակարդակի հսկայական աճումը:

Անդրկովկասյան ֆեդերացիայի տնտեսական-քաղաքական ամրապնդումը տեղի է ունեցել ամբողջ կուսակցութեան և Անդրկովկասյան կազմակերպութեան պայքարում, վոր մղվել է յերկու ֆրոնտում՝ ընդդեմ մեծ ապստամբական շուրջի-շուրջի փորձերի, վորպես գլխավոր վտանգի, Անդրկովկասյան ֆեդերացիայի մեջ մտնող հանրապետութիւններն անդրմացնելու և նրանց դեպի լիկվիդացիա տանելու փորձերի դեմ և ընդդեմ տեղական նացիոնալիզմի, վորը ձգտում է թուլացնել Անդրկովկասյան ֆեդերացիան և խախտել Անդրկովկասի հանրապետութիւնների բանվորական ու աշխատավոր մասսաների ինտերնացիոնալ համերաշխութիւնը—բուրժուական նացիոնալիզմի շահերի ոգտին։

Բազմի կազմակերպութիւնը և ամբողջ Այրկովկասը (բ) պաշտպան են կանգնած կուսակցութեան նվաճումների, անդադար պայքարելու պայքարելու են Անդրկովկասյան ֆեդերացիայի տնտեսական-քաղաքական ամրապնդման համար։

Բազմի 20-րդ կուսկոնֆերանսը Անդրկովկասյան ֆեդերացիայի տասնամյակի առթիւ հատուկ վորոշում է կայացրել։

Այրկովկասի 11-րդ համագումարն անկասկած հաժանութիւն կտա ու կհաստատի Բազմի 20-րդ կուսկոնֆերանսի այդ վորոշումը։

Նավթի և բամբակի համար տարվող պայքարն Ադրբեջանի ու Անդրկովկասի ֆեդերացիայի պայմաններում անխզելի կերպով կապված է լինիյան ազգային քաղաքականութեան ճիշտ կիրառման հետ, բանվորական ու աշխատավոր մասսաների նշու-թական ու կուլտուր-քաղաքական մակարդակի աճման հետ, այն մասսաների, վորոնք կուսակցութեան ղեկավարութեամբ ընթանում են վերջնականապես վերացնելու հետաֆնացութեան տարերն ու կապիտալիստական անցյալի ֆնացորդները։

1931 թ. յեղել է խորհրդային Ադրբեջանի հիմնական շրջադարձի տարի՝ բամբակի ու կուլիկտի վաճառման համար տարվող պայքարում։

Այրկովկասի (բ) 11-րդ համագումարը պետք է ամրապնդի այդ շրջադարձը և 1932 թ. պիտի ապահովի՝ բամբակային ուսոնների կուլիկտի վաճառմամբ հիմնականում ավարտելու հիման վրա այնտեղ կուլակու-

թյունը — վորպես դասակարգի լիկվիդացի-յեն թարկելը, ապահովի՝ համաձայն Վեյսկոֆ-ի (բ) հիմնական վորոշման՝ Անդրկովկասում տեղեկելու խորհրդային Միութեան բամբակային յերկրորդ բազան։

11-րդ համագումարի, վորը մորիլիդացիայի է լինթարկում Ադրբեջանի գյուղի մասսաները, հիմնական լողունը պետք է լինի աշխատավորական լայն մասսաներին մատչելի «հանուն կուլիկտի, ընդդեմ կուլակի» լողունը։

Վերլուծելով, մերկացնելով և ուղղելով այն բոլոր սխալները, վոր թույլ են տվել Ադրբեջանի մի շարք աշխատողներին կուլակական, հարցի և կուլտուրային շարժման վերաբերմամբ և մատանշվել են Վեյսկոֆ-ի (բ) հիմնական հոկտեմբերի 31-ի վորոշման մեջ, Այրկովկասի (բ) 11-րդ համագումարը պիտի ապահովի բոլոր անհրաժեշտ միջոցները, վորպեսզի 1932 թիվն Ադրբեջանի բոլոր ուսոնների համար լինի կուլիկտային շարժման հետագա զարգացման ու աճման տարի՝ գոյութեան ունեցող կուլիկտների կազմակերպչա - տնտեսական ամրապնդման և ծուլմաների դեմ հետագա պայքար մղելու հիման վրա։

Սոցիալիզմի հետագա կառուցման հիմնական խնդիրները, մանավանդ, բազմազգի Անդրկովկասի դասակարգային պայքարի պայմաններում, պահանջում են ոժեղացնել Այրկովկասի (բ) զգաստութիւնը և բուլշեկական ղեկավարին։

Այրկովկասի (բ) ներկուսակցական աշխատանքի հիմնական ողակը կազմում է պայքարը բուլշեկիյան կուսակցական ութթեան և գաղափարա-քաղաքական մակարդակի բարձրացման համար։

Կուսակցութեան հիմնական գծի համար մղվող պայքարում, ընդդեմ աջ ուղորտոն-նիստների, վորպեսզի գլխավոր վտանգի, ընդդեմ «ձախ» ծուլմաների և հաշտվողական, գրուպ-թեան, ընդդեմ յերկերեսանիութեան, գրուպ-պովշիչիյան յի և «ատամանշիչիյան յի», ընդդեմ հակահեղափոխական տրոցկիզմի, նկատման լիբերալիզմի, — Այրկովկասը (բ) Անդրյեր-կովկասի և Վեյսկոֆ-ի (բ) հիմնական ղեկա-

վաթուկ յամբ՝ տարեցտարի բարձրացնում է իր շարքերի միաձուլութունը — հաղթանակի հիմնական պայմանը:

Բազմի յերեկ վերջացած 20-րդ կոնֆերանսը բոլորիսկյան կուսակցականության համար տարվող պայքարի ամենափայլուն որինակն է տալիս մեզ՝ ինքնաքննադատության և ներկուսակցական դեմոկրատիայի հրման վրա, վերոնք ապահովել են կոնֆերանսի բոլոր վարդուհներ լիակատար համերաշխութունը:

Աղբբեջանի Կոմկուսը՝ Վրաստանի և Հայաստանի Կոմկուսի օտարական կուսակցություններին հետ միասին՝ Անդրյերկրկոմի և Վեհկոմի (բ) Կենտկոմի բոլոր լիակատար դեմակաթուկ յամբ՝ առույգ ու համարձակ կերպով առաջ ելն թանուամ գեպի սոցիալիստական շինարարության նոր հաղաթուկ յունները, գեպի համաշխարհային Հոկտեմբերը:

Աղբկոմկուսի (բ) 11-րդ համագումարն իր համերաշխությամբ ու վարդուհներով կարեվորագույն ետապը կհանդիսանա այդ պայքարի ու հետագա հաղթանակների ուղու վրա:

Կեցցեն Աղբբեջանի և Անդրկովկասյան ֆեդերացիայի բանվորական և աշխատավոր մասսաները:

Վոդջուկյն Վրաստանի ու Հայաստանի Կոմսակցական համագումարներին:

Կեցցեն Վեհկոմի (բ) Անդրյերկրկոմը:

Կեցցեն Վեհկոմի (բ) Կենտկոմը և Կոմսակցության ու համաշխարհային պրոլետարիատի առաջնորդը Եկ. Ստալինը: (Բուռն ծափահարություններ, բոլոր պատվիրակները վոտքի են կանգնում, յերաժշտախումբը նվագում է «Ինտերնացիոնալ»):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

69

- I. Համախարհային կրիզիսն ու Խորհ. Միությունը . . . 3
Կապիտալիզմի ներքին հակասությունների սրումը.— Պատերազմի վտանգը.— Հեղափոխական պայքարի դարգացումը.— Սորհ. Միություն:
- II. Կուսակցության XVI համագումարից հետո . . . 20— 34
Անդրկովկասյան կուսակցականությունը. — Բազմի կազմակերպությունը և Աղբկոմկուսը (բ).— Ընկ. Ստալինի 6 պայմանները և ինքնատուգման փորձը:
- III. Արդյունաբերությունն ու տրանսպորտը 1931 թվին յեկ 1932 թվի հեռանկարներ . . . 35— 59
Նավթ. — Նավթահանություն. — Հորսփորություն.— Մշակում.— Երկրորատուի.— Ընկ. Ստալինի 6 պայմանները.— 1932 թվի և տեխնիկական վերակառուցումը.— Աղբկոմի կազմը և դեկավարությունը. — Կապար. — Ցերկաթուղային տրանսպորտ.— Զուկ:
- IV. Գյուղական սնեստության սոցիալիստական վերակառուցումը յեկ դասակարգային պայքար գյուղում 60— 72
Կոլեկտիվացման հարցերը.— Բամբակ:
- V. Կոպերացիայի աշխատանքը յեկ բանվորական մասակարարումը . . . 73— 75
- VI. Քաղաքային սնեստությունը . . . 76— 78
- VII. Անգրագիտության վերացումը յեկ բնդհանուր ուսումը 79— 80
- VIII. Խորհրդային շինարարությունը յեկ մասսայական կազմակերպությունների աշխատանք . . . 81— 86
Բյուջեի և ֆինանսների մասին.— Բազմորհուրդ.— Կոմյերիսմիություն.— Պրոֆիսությունները և սոցմրցումը:
- IX. Կադրերը . . . 87— 88
- X. Ազգային քաղաքականությունը յեկ Անդրձեդերացիայի աւրապնդումը . . . 89— 91
- XI. Ներկուսակցական դրությունը յեկ Բազմի կազմակերպությունը . . . 92—102
- Ընկ. Պոլոնսկու հաոր Աղբկոմկուսի (բ) XI համագումարի բացման ժամանակ . . . 103—110





ՀՀ Ազգային գրադարան



NL0183555

168.1

2001

3KNI(47.924)

7-77

V. I. Polonsqi

Baqь təşqilatь jeni mərhələdə

(1932-nei ilin 12 janvarında Uymь Baqь XX
firka konfransında Polonsqi joldaşın mə'ryzəsi)